Նորույթ - 1. Նորություն: 2. Նորատարազ, նորաձևություն:
Նորքար - Ծառա, ճորտ, ստրուկ, սպասավոր, դրանիկ:
Նպաստ - 1. Օժանդակություն, աջակցություն, օգնություն, սատար: 2. Օգուտ, շահ:
Նպաստավոր - Բարենպաստ, բարեհաջող, հաջող, ձեռնտու (պայման), օգտավետ:
Նպաստել - Օժանդակել, օգնել, աջակցել, սատարել:
Նպատակ - 1. Մտադրություն, դիտավորություն, ծրագիր: 2.Իղձ:
Նպատակադրվել - Մտադրվել, ծրագրել, որոշել, վճռել:
Նպատակակետ - Թիրախ, նշավակ, նպատակ, նշանակետ:
Նպատակահարմար - Ձեռնտու:
Նպարեղեն } - Սննդամթերք, ընդեղեն, սննդանյութ, պարեն, պարենամթերք,
Նպար } պաշար, մթերք, սնունդ, ուտելիք, ուտեստ:
Նռնաքար - Հրակն, հաղարջակն, հաղարջաքար:
Նսեմ - 1. Աննշան, անշուք: 2. Աղոտ, նվազ, թույլ, տմույն, դժգույն, ստոր:
Նսեմանալ - 1. Խավարել, մթնել, մթագնել: 2. Աղոտանալ, դժգունել: 3. Անշքանալ:
Նստակյաց - Հաստատաբնակ, մշտաբնակ, մշտակյաց:
Նստարան - Աթոռ, աթոռակ, բազմոց:
Նստել - 1. Բազմել, տեղավորվել, հանգչել, ընկողմանել, թառել, հեծնել: 2. Գահակալել, աթոռակալել: 3. Արժենալ: 4. Հագնել, ագուցվել: 5. Բանտարկվել:
Նստվածք - Մրուր, տակուցք, տականք, մնացորդ, մնացուկ, դիրտ:
Նվագ - 1. Երաժշտություն, եղանակ, երգ, տաղ, մեղեդի, (կրոն.) գանձ, սաղմոս, շարական, ավետիս: 2. Նվագածություն:
Նվագածու - Երաժիշտ, նվագահար: Երգիչ, երգասաց, գուսան, աշուղ, ակին:
Նվագածություն - Նվագ, երաժշտություն, երգ, երգեցողություն, երգասացություն:
Նվագակցել - Դաշնակցել, ձայնակցել, դամ պահել:
Նվազ - 1. Քիչ, սակավ, պակաս: 2. Նվաղ, թույլ, տկար:
Նվազել - 1. Պակասել, քչանալ: 2. Թեթևանալ, մեղմանալ: 3.Աղոտանալ, նսեմանալ (լույսը): 4. Տկարանալ, թուլանալ (ուժը):
Նվազեցնել - 1.Քչացնել, պակասեցնել: 2.Իջեցնել, զեղչել(գինը), նսեմացնել (համբավը), թեթևացնել, մեղմել (հանցանքը):
Նվաղ - 1. Անուժ, տկար, թույլ: 2.Աղոտ, տմույն, դժգույն, պղտոր:
Նվաղել - 1. Ուշաթափվել, թալկանալ, մարմրել, ուշքը գնալ: 2.Թուլանալ, տկարանալ:
Նվաճել - Ընկճել, հաղթահարել, սանձահարել: 2. Տիրել, տիրանալ, իշխել, ենթարկել, տիրապետել, զավթել, գրավել, զավթել, հաղթել:
Նվաճում - 1.Գրավում, զավթում, բռնագրավում: 2. Ձեռքբերում, հաջողություն:
Նվաստ - Ստորին, հետին, անարգ, նկուն, փոքրոգի, չնչին, խղճուկ, ցած,ստոր:
Նվաստանալ - 1.Ստորանալ, ցածրանալ, գլուխ խոնարհել, կորանալ: 2.Շողոքորթել:
Նվաստացուցիչ - Անպատվաբեր, վիրավորական, ստորացուցիչ:
Նվեր - Ընծա, պարգև, նվիրաբերություն, նվիրատվություն, ժամուց:

Նվիրաբերել - 1.Նվիրել, ընծայել, պարգեւել, շնորհել: 2.Կտակել: 3.Զոհել, զոհաբերել:
Նվիրագործել - 1.Սրբագործել, մաքրագործել, օծել, օրհնել: 2.Ձեռնադրել:
Նվիրակ - Պատգամավոր, պատվիրակ, ներկայացուցիչ, լիազոր, դեսպան:
Նվիրական - 1.Նվիրողական: 2.Սուրբ, օրհնյալ, սրբանվեր, սրբազան, սրբազնագույն:
Նվիրապմություն - Պարգեւատրություն, նվիրաբերություն, ընծայություն, նվեր, ողորմություն, նպաստ:
Նվիրել - 1.Ընծայել, պարգեւել, նվիրաբերել, շնորհել: 2.Զոնել, ներբողել: 3.Զոհաբերել:
Նվիրում - 1. Ընծայում, պարգեւում: 2. Զոհաբերություն, նավակատիք:
Նրբագեղ - Քնքուշ, գեղեցիկ, սիրուն, գեղեցկանուրբ:
Նրբազգաց - Նրբանկատ, խորաթափանց, փափկանկատ, նրբամիտ:
Նրբակազմ - Նրբահասակ, բարեկազմ, վայելչակազմ, բարեձեւ, գեղահասակ, գեղակազմ, գեղիրան, ազնվազարմ, սլացիկ:
Նրբակիրթ - Քաղաքակիրթ, քաղաքավար(ի), բարեկիրթ, ազնվակիրթ:
Նրբամիտ - Խորաթափանց, նրբազգաց, նրբանկատ, խորամիտ, նրբիմաց:
Նրբանալ - 1. Բարականալ, բարակել: 2. Ազնվանալ, քնքշանալ, մեղմանալ:
Նրբանկատ - Փափկանկատ, նրբազգաց, նրբամիտ, խորաթափանց:
Նրբանցք - 1. Նրբափողոց: 2. Նեղանցք: 3. Նրբուղի:
Նրբերանգ - Երանգ, գունավորում, երանգավորում, նրբիմաստ:
Նրբիրան - Բարակիրան, քնքշիրան, նրբամեջք, բարակամեջք:
Նրբություն - 1.Բարակություն, անոսրություն: 2.Նրբազգացություն, մանրակրկիտություն: 3.Քնքշություն, փափկություն, նրբագեղություն:
Նուբար - Երախայրիք, նորաբերք, նախապտուղ, բար, առաջնապտուղ:
Նույն - Միեւնույն, համանման, ճիշտ եւ ճիշտ, նույնական:
Նույնանիշ - 1. Հոմանիշ, համանիշ, համիմաստ: 2. Համանշանակ:
Նույնանուն - Համանուն, նույնահնչյուն:
Նույնատեսակ - Նույնակերպ, նույնաձեւ, նույնանման, նույնօրինակ, նույնպիսի, համանման, նման, միատեսակ:
Նույնիսկ - Մինչեւ անգամ, մինչեւ իսկ, անգամ:
Նույնպես - 1. Նմանապես, նույնակի: 2. Նաեւ, եւս:
Նույնպիսի - Նույնատեսակ, նույնօրինակ, նման:
Նույնքան - Նույնչափ, նույնաքանակ, նույնաչափ:
Նուրբ - 1. Բարակ, անոսր, փափուկ: 2. Մեղմ, թեթեւ, քնքուշ: 3. Զգայուն, խորաթափանց: 4.Վայելուչ, բարեկազմ, սլացիկ:

Շ

Շալակ - 1. Բեռ, շալակաբեռ: 2. Թիկունք, մեջք:
Շալակել - Կրել, կռնակն առնել, ուսել:
Շալվար - Տաբատ, անդրավարտիք:
Շախմատ - Ճատրակ:
Շահ1 - 1. Շահույթ, օգուտ: 2. Տոկոս, վաշխ:
Շահ2 - Թագավոր, կայսր, արքա, ցար, շահնշահ:
Շահագործել - 1. Կեղեքել, ճնշել, հարստահարել: 2. Օգտագործել, գործածել:
Շահագրգռել - Հետաքրքրել, հետաքրքրություն շարժել:
Շահադիտական - Շահախնդրական, շահամոլական,շահասիրական:
Շահախնդրություն - 1. Շահադիտություն, շահամոլություն: 2.Շահագրգռություն:
Շահամոլ - Շահասեր, շահախնդիր, շահատենչ:

Շահաւեր -Շահամոլ, շահախնդիր, շահադետ, շահատենչ:
Շահավետ - Շահութաբեր, շահեկան, օգտակար, օգտավետ, ձեռնտու:
Շահատակություն - 1.Արշավանք, hարձակում: 2.Քաջագործություն:
Շահել - 1. Վաստակել, օգտվել: 2. Հաղթել: 3. Գրավել (սիրտը): 4.Պահել, խնամել:
Շահեկան - 1. Օգտավետ, շահավետ, արդյունավետ, շահութաբեր: 2. Պիտանի:
Շահեն - Բազե, ճուռակ, աղավնորս:
Շահնշահ - Թագավոր, արքա, գահակալ:
Շահութաբեր - Շահավետ, շահեկան, օգտավետ:
Շահույթ - Օգուտ, շահ, ստակ:
Շաղ - 1. Ցող. շաղիկ, ցողիկ: 2. Անձրեւ:
Շաղախ - Ցեխ, մոլ, շլամ:
Շաղախել - 1. Ծեփել, ցեխ անել: 2. Շաղել, հունցել:
Շաղակրատ - Շատախոս, դատարկախոս, զրախոս, լեզվագար, լեզվանի, բացբերան:
Շաղակրատել - Շատախոսել, շաղփաղփել, զրախոսել, դատարկաբանել:
Շաղապատ - Շաղաքաթախ, շաղախառն, շաղոտ, ցողոտ:
Շաղափ - Գայլիկոն, գչիր:
Շաղափել - Ծակել, գայլիկոնել, բուրղուել (բրբ.):
Շաղկապ - 1. Շաղ, զուգակապ: 2. Հոդ, հոդակապ: 3. Կապակցություն:
Շաղկապել - Կապակցել, կապել, կցել, զոդել, հոդել, միացնել, շղթայել:
Շաղվել - 1. Շփոթվել, խառնվել: 2. Մթագնել, մթնել, բժժել:
Շաղփաղփել - Շաղակրատել, շատախոսել, զրախոսել, դատարկախոսել:
Շամանդաղ - 1. Մեգ, մառախուղ, մշուշ, մուժ, թուխպ, մառ, մռայլ, բալ, միգամածու-
թյուն: 2. Հյուլե, մասնիկ, տարր, փոշի:
Շամբ - 1. Եղեգ: 2. Եղեգնատունկ: 3. Շամբուտ:
Շամբուտ - Շամբ, եղեգնուտ, եղեգնապուրակ, եղեգնոց:
Շամփրել - Շշել, ծակել:
Շամփուր - Շիշ:
Շանթ - Կայծակ, շանթիկ:
Շանթահարել - Կայծակել, կայծակնահարել, շանթել, փայլակնահարել:
Շանթել - 1. Շանթահարել, շանթակոծել, կայծակնահարել: 2.Խայթել: 3. Վիրավորել:
Շաչել - Շառաչել, շչել, շչալ, ֆշշալ, սուլել (օձի), ճայթել, ճարճատել:
Շաչյուն - Շառաչյուն, ճայթյուն, ճարճատյուն (կրակի), ֆշշոց, սուլոց (օձի):
Շապիկ - 1. Ներքնաշապիկ: 2. Բլուզ, վերնաշապիկ:
Շառագունել - 1. Շիկնել, կարմրել, ամաչել: 2.Կարմրատակել, բոսորագունել:
Շառաչյուն - Շառաչ, շաչյուն, դղրդյուն, գոռոց, շփշփոց, ճարճատյուն:
Շառավիղ - 1. Ընձյուղ, ճյուղ: 2. Սերունդ, զարմ, զավակ: 3. Տոհմ, ցեղ: 4. Ճառագայթ:
Շառափ - Անձրեւ, տեղատարափ, տարափ:
Շավիղ - 1. Ճանապարհ, ուղի, արահետ, կածան: 2. Հետք: 3. Ուղղություն:
Շատ - 1. Բազում, բազմաթիվ, բյուր, բյուրավոր, մեծաթիվ: 2. Առատ, ճոխ: 3. Հաճախ,
հաճախակի: 4.Սաստիկ, խիստ, հույժ, կարի: 5. Ավել, ավելի:
Շատախոս - Շաղակրատ, լեզվագար, դատարկախոս, ճամարտակ, զրուցասեր:
Շատախոսել - Շաղակրատել, շաղփաղփել, դատարկաբանել, զրախոսել:
Շատակեր - Որկրամոլ, պորտաբույծ, անհագ, անհագուրդ, անկուշտ:
Շատանալ - Ավելանալ, առատանալ, բազմանալ, բազմապատկվել, մեծանալ, աճել,
դիզվել, կուտակվել, կիտվել, վխտալ:
Շատացնել - Բազմացնել,ավելացնել, բազմապատկել, հորդացնել, ճոխացնել:
Շատրվան - Ցնցուղ, ջրցայտ:
Շատրվանել - Բխել, արտավիժել, ժայթքել, ցայտել:

Շարադասել - 1. Դասավորել, կարգավորել, շարակարգել: 2. Շարադրել:
Շարադասություն - Կարգավորություն, կապակցություն, դասավորություն:
Շարադրել - Գրել, հեղինակել, շարահյուսել:
Շարադրություն - 1.Գրվածք, գրություն, շարադրանք: 2.Աշխատություն:
Շարական - Շարակնոց, կանոն, օրհներգ, մեսսա:
Շարահարել - Կցել, միացնել:
Շարահյուսել - 1. Գրել, շարադրել, հեղինակել: 2. Հյուսել, ոլորել: 3.Շաղկապել:
Շարահյուսություն - 1. Համաձայնություն, շարադասություն: 2. Շարադրություն, հեղինակություն, գրվածք, գրություն:
Շարան - 1. Շարք, կարգ: 2. Քարավան: 3. Շարոց:
Շարբաթ - Օշարակ:
Շարել - Դարսել, դասավորել, դասդասել, դիզել, դնել:
Շարժ[1] - Շարժում, երկրաշարժ:
Շարժ[2] - Ջավեշտանկար, ծաղրանկար:
Շարժառիթ - Առիթ, դրդապատճառ, պատճառ, ազդակ:
Շարժել - Ցնցել, տատանել, տեղաշարժել, խախտել, տարուբերել, գրգռել:
Շարժվել - Երերալ, ցնցվել, տատանվել, խլրտալ, գլորվել, ծածանվել, տարուբերվել, սողալ, գնալ, ընթանալ, սլանալ:
Շարժուն - 1.Վարվելաձեւ, վարվելակերպ: 2. Շարժվածք:
Շարժում - 1. Տատանում, ցնցում, երերում, ծածանում: 2.Գրգռում,հուզում: 3.Փոփոխում: 4.Առաջխաղացում: 5. Անցուդարձ:
Շարժուն - 1.Դյուրաշարժ, ճապուկ: 2.Շարժական, երերուն, փոփոխական:
Շարման - 1. Մահ: 2.Գեղեցիկ:
Շարունակ - Անընդհատ, անդադար, անդուլ, անվերջ, միշտ, մշտական, հարատեւ:
Շարունակել - 1.Երկարաձգել, տեւականացնել: 2.Առաջ տանել:
Շարունակվել - Հարատեւել, երկարաձգվել: Տարածվել, ձգվել:
Շարք - 1. Կարգ, շար, տողան, տող, շարվածք, շարան: 2.Հաջորդականություն:
Շարքային - Զինվոր, մարտիկ, ռազմիկ:
Շափյուղա - Սուտակ, լալ:
Շափրակ - Ծաղկեպսակ, պսակ:
Շաքարաջուր - Շարբաթ (ժող.), օշարակ:
Շեկ - Դեղնակարմիր, խարտյաշ, շիկավուն, դեղձան, շառագույն, աշխետ, շիկահեր:
Շեղակի - Շեղահար, շեղ, զարտուղի:
Շեղբ - Սայր, բերան, ծայր:
Շեղջ - Դեզ, կույտ, կուտակ, շեղջակույտ, բարդ, կարկառ (քարերի), բարդոց, տրցակ:
Շեղվել - Ծովել, խոտորվել, թեքվել, մոլորվել, վրիպել, սայթաքել, սխալվել:
Շեղում - 1. Խոտորում, թեքում, ծռում: 2. Սայթաքում, սխալ, վրիպում: 3. Ջեղում:
Շեմ - 1. Սեմ, սյամ: 2.Մուտք, սկիզբ:
Շեն[1] - 1. Բազմամարդ, մարդաբնակ: 2.Բարեկից: 3. Կենդանի, կանգուն:
Շեն[2] - Բնակավայր, բնակատեղ(ի), ավան, գյուղ, գյուղակ:
Շենշող - Ուրախ, զվարթ, կայտառ, ժպտերես, մշտաժպիտ:
Շենք - 1. Շինություն, կառույց, տուն: 2.Շինվածք: 3.Տեսք, կերպարանք:
Շեշպակի - 1. Ուժեղ, ուժգին, կտրուկ, անշեղ: 2. Շեշտակիորեն:
Շեշտել - 1. Ընդգծել, պնդել, մատնանշել, նշել: 2. Շեշտ դնել:
Շերամ - Շերամորդ, մետաքսագործ, մետաքսի որդ:
Շերտ - 1. Խավ, երիզ, ծալք: 2. Պճեղ:
Շերտավոր - Թերթավոր, խավավոր, ծալքավոր, զոլավոր, շերտ-շերտ:
Շեփոր - Եղջերափող, գալարափող, գալարաշեփոր:

Շփոթահար - Փողահար, փողհար, փողական:
Շիբ - Կաթիլ, կայլակ, պուտ, ցայտ:
Շիլ - Շլաչք, շլաչյա, խեթ, շեղակն, շլիկ, (բրբ.) շաշ:
Շիկագույն - Շեկ, խարտյաշ, շիկավուն, դեղնակարմիր, դեղին, դեղձան, արեւագույն: Շիկադեմ, շեկլիկ: Շառագույն, շիկակարմիր:
Շիկակարմիր - 1. Աշխետ, շիկագույն, շառագույն (ձի): 2. Շեկ, դեղձան:
Շիկահեր
Շիկամազ } -Շիկագանգուր, շիկագլուխ, շեկ, շեկլիկ, խարտյաշ, խարտիշահեր, ոսկեհեր, ոսկեվարս, ոսկեծամ:
Շիկանալ - Կարմրել, կարմրատակել, կեծանալ, տաքանալ:
Շիկնել - 1. Կարմրել, կարմրատակել, շառագունել: 2. Ամաչել:
Շինական - 1. Գյուղացի, գեղջուկ, ռամիկ: 2. Գյուղական, գեղջկական:
Շինարար - Կառուցող, շինող:
Շինել - 1. Կառուցել, կառուցապատել, կերտել, ստեղծել, պատրաստել, կազմել, հնարել, հորինել, սարքել: 2. Զարդարել, գեղեցկացնել (հողքերը):
Շինծու - Սուտ, ստահոդ, կեղծ, անիսկական, անբնական, արհեստական, հնարովի, շինովի, անհավանական, առասպելապատում:
Շինվածք - 1. Շինություն, շենք, կառույց, կառուցվածք: 2. Հորինվածք:
Շիշ - 1. Սրվակ, անոթ, տարա: 2.Շամփուր:
Շիվ - Ճյուղ, ուղեշ, ոստ, շառավիղ, մորճ, պատվաստ, ընձյուղ:
Շիվան - Լաց, կոծ, կական, ողբ, լացուկոծ, վայնասուն, ջայլ (խմբովին):
Շիտակ - 1.Ուղիղ, ճշմարիտ, ճիշտ, իրավացի, արդար, ազնիվ, շիփ-շիտակ: 2.Արդարախոս, արդարամիտ, ճշմարտախոս, ուղղամիտ:
Շիտակություն - Ուղղամտություն, ազնվություն, արդարություն, ճշմարտություն, արդարամտություն, շիտակամտություն:
Շիրա - 1. Քաղցու, մուզ, մածառ: 2. Խաղողահյութ, խաղողաջուր:
Շիրիմ - Գերեզման, դամբան, դամբարան, տապան, դամբանաքար, տապանաքար:
Շիրմաքար - Գերեզմանաքար, տապանաքար, դամբանաքար, շիրիմ:
Շլանալ - 1. Շլդիկանալ, շլել, շլվել: 2. Հափշտակվել, հիանալ, ապշել, զարմանալ:
Շլացնել - 1. Խտղտել: 2. Ապշեցնել, հրապուրել: 3. Կուրացնել (փխբ.), հղփացնել:
Շլացուցիչ - Հրապուրիչ, զմայլեցուցիչ, ապշեցուցիչ, ակնախտիտ: Պսպղուն, շողշողուն:
Շլինք - 1. Վիզ: 2. Ծոծրակ:
Շղարշ - Քող, երեսակալ, ծածկաքող, վարշամակ (վզի):
Շղթա - 1. Կապ, կապանք, պարավանդ: 2. Գոտի: 3. (փխբ.) Լուծ, ստրկություն:
Շղթայել - Կաշկանդել, շղթայակապել:
Շյուղ - Ծղոտ, ծղոն, ծեղ, մառ, մղեղ, չոփ, ոստ:
Շնազայլ - Գայլաշուն, չախալ, չախկալ:
Շնահաչ - Կաղկանձ, հաչոց:
Շնաչագ - Լակոտ, ձագ, շնալակոտ, թուլա:
Շնանալ - Տռփալ, լրբանալ, այլասերվել, անբարոյականանալ, անառականալ:
Շնկշնկալ - Սոսափել, խշխշալ, խշշալ, խլրտալ, սոսափել, սվսվալ:
Շնորհ - 1. Պարգեւ, նվեր: 2. Ձիրք, ընդունակություն, տաղանդ: 3. Բարեհաճություն, հովանավորություն, օգնություն: 4. Արտոնություն: 5. Շնորհք:
Շնորհազուրկ - Ապաշնորհ, անշնորհք, անձիրք, անտաղանդ, անընդունակ, անկարող, անշնորհալի, տաղանդազուրկ:
Շնորհալի - Տաղանդավոր, մեծաշնորհ, բարեշնորհ, գերաշնորհ, բազմաշնորհ:
Շնորհակալ - Երախտապարտ, երախտագետ, երախտահատույց, գոհունակ:

Շնորհակալություն - Երախտագիտություն, երախտապարտություն, երախտավորություն, գոհունակություն:
Շնորհավորանք - Շնորհավորություն, բարեմաղթություն, բարեմաղթանք:
Շնորհավորել - Բարեմաղթել, աչքալուսանք տալ:
Շնորհել - 1. Պարգևել, պարգևատրել, նվիրել, ընծայել, ձոնել, բաշխել, տալ: 2.Թողնել, բույլատրել, արտոնել: 3. Ներել:
Շնորհք - 1. Ձիրք, տաղանդ, ունակություն, ընդունակություն, բարեմասնություն: 2.Շնորհ, պարգև, բարիք: 3. Վայելչություն, բարեկրթություն, ճաշակ:
Շնչակտուր - Շնչասպառ, շնչասպատառ, հևիհև, հևասպառ, շնչահատ:
Շնչահեղձ - Շնչասպառ, շնչարգել:
Շնչասպառ - Շնչակտուր, հևիհև, հևասպառ, շնչահեղձ, շնչարգել:
Շնչավոր - 1. Կենդանի, հոգևոր: 2. Արարած, անձ, մարդ, էակ:
Շնչավորել - Կենդանացնել, անձնավորել:
Շնչափող - Խռչափող, խռչակ, հազագ:
Շնչել - 1. Շունչ քաշել, շունչ առնել, ներշնչել, արտաշնչել: 2.Ապրել: 3. Փչել:
Շշմել - 1. Ապշել: 2. Թմրել: 3.Զարմանալ:
Շշմեցուցիչ - 1.Ապշեցուցիչ: 2.Գլխապտույտ:
Շշնջալ - Քչփչալ, փսփսալ, մրմնջալ, հծծել,խոսել (ցածր), ականջին ասել:
Շշուկ - Շշունջ, շշնջոց, շշնջյուն, ձայն, փսփսոց, փսփսուք, քչփչոց, մրմունջ, շրշյուն, սոսափյուն, հծծանք:
Շոգ - 1. Տաքություն, տապ, տոթ, գոլ: 2. Տոթագին, տոթակեզ, բարկ:
Շոգիանալ - Գոլորշիանալ, ցնդել, վերանալ:
Շող - Շողք, ճառագայթ, ճաճանչ, շառավիղ, նշույլ, ցոլք:
Շողալ - Փայլել, ցոլալ, ճառագայթել, ճաճանչել, փայլփլել, շողարձակել, փայլատակել, պսպղալ, շողշողալ, կայծկլտալ:
Շողակն - Ադամանդ, ալմաստ, ակ, գոհար, վարդենիկ:
Շողարձակել - Ճառագայթել, ճաճանչել, շողալ, շողշողալ, նշուլել:
Շողիք - Լորձունք, թուք, փսլինք:
Շողշողալ - Շողշողել, փայլել, փայլփլել, ցոլցլալ, շողալ, ճառագայթել, ճաճանչել, փայլատակել, պսպղալ, շողարձակել, պլպլալ:
Շողշողուն - Փայլփլուն, փայլուն, պայծառ, պսպղուն, պաղպաջուն, լուսափայլ:
Շողոմ - Կեղծավոր, շողոքորթ, երկերեսանի, քծնող, քսու, երեսպաշտ:
Շողոքորթ - Երկերեսանի, քծնող, քսու, հաճոյասեր, երեսպաշտ, հաճոյախոս, քաղցրախոս, խնկարկու, ստորաքարշ, ստրկամիտ, փարիսեցի, կեղծավոր:
Շողոքորթել - Հաճոյախոսել, քծնել, շողոմել, խնկարկել, խնկել, կեղծավորել, հաճոյանալ, շոյել, փաղաքշել, օձի լեզու թափել:
Շողք - 1. Շող, ճառագայթ, ճաճանչ, նշույլ, շառավիղ, ցոլք: 2. Ստվեր:
Շոյել - Փաղաքշել, փայփայել, փարվել, գգվել, գուրգուրել, գորովել:
Շոշափել - 1. Հպել, քսել, շփել: 2. Փորձել: 3. Արծարծել, քննարկել:
Շոշափելի - 1. Զգալի, իրական: 2. Հպելի, դիպչելի:
Շոր - 1. Զգեստ, հանդերձ, հագուստ: 2. Շրջազգեստ, դերիա (ժող.): 3. Լաթ, կտոր:
Շորթել - Կորզել, խլել, հափշտակել, յուրացնել, գռփել, գզել, պոկել, պլոկել, քոցնել, գողանալ, գրպանել:
Շորշոփ - 1. Հետք, մնացորդ, ստվեր, նշան: 2. Զորություն, ուժ: 3. Ցնցում (շոկ):
Շորորալ - 1. Սիգալ, շորորկտալ, քայլել, կաքավել: 2. Տարուբերվել:
Շորորանք / ***Շորորաքայլ*** - Նազանքով, կաքավանքով, կաքավաքայլ, գեղեցկանքով, սիգանքով, պերճաքայլ:
Շպար - Սնգույր, ներկ:

Շպարվել - Ներկվել, սնգուրվել, բավել:

Շռայլ - 1. Առատաձեռն, բարեհոգի, ձեռնբաց: 2. Վատնիչ, փառնող: 3. Առատ, լի, ճոխ, պերճ, հարուստ, հուրի: 4. Ձեխ, ցոփ, շվայտ, արբշիռ:

Շռայլել - Վատնել, մսխել, ծախսել:

Շռինդ - Աղմուկ, ժխոր, շառաչյուն, շռնդյուն, շաչյուն, սույզ, հռնդյուն, շառաչ:

Շռնդալի - Աղմկալի(ց), աղմկոտ:

Շվայտ - 1. Ձեխ, ցոփ, անառակ, արբշիռ: 2. Շռայլ, վատնիչ:

Շվարել - 1. Մոլորվել, շփոթվել, տատամսել: 2. Ապշել, զարմանալ:

Շրի - Եղեգնափող, եղեգնասրինգ, սրինգ, դուդուկ:

Շտապ - Փութկոտ, հապճեպ, շուտափույթ, անհապաղ, անմիջապես, խկույն, խկույն-ևեթ, հենց, հապշտապ, փռազ, գլխապատառ:

Շտապել - Աճապարել, փռազել, փութալ, ճեպել, արտորալ:

Շտեմարան - Ամբար, մթերանոց, պահեստ, մառան, հարդանոց, մարագ, պաղանոց:

Շտկել - 1. Կարգավորել, բարեկարգել, հարթել, կոկել: 2.Ուղղել, ճշտել:

Շրթունք - 1. Պռոշ (բրբ.), շուրթ: 2.Եզր, պռունկ:

Շրիշակ - Եզրաձողիկ, ձողիկ:

Շրխկոց - Շառաչյուն, շառաչ, շրմփոց, թրխկոց, թրմփոց:

Շրշյուն - Սոսափյուն, շնկշնկոց, խշրտոց, խշխշոց:

Շրջագայել - Ճանապարհորդել, շրջել, ճամփորդել, պտտել, զբոսնել, ճեմել, հածել, դեգերել, թափառել, ման գալ:

Շրջագիծ - 1. Շրջան, շրջանագիծ, պարագիծ, բոլորագիծ: 2.Եզրագիծ:

Շրջադարձ - 1. Բեկում, անկյունադարձ: 2.Կեռման, ոլորան (ճանապարհի):

Շրջակա - Մոտակա, մերձակա, մոտիկ:

Շրջակայք - Արվարձան, մերձակայք, մոտակայք:

Շրջահայաց - Շրջանկատ, հեռատես, զգուշավոր, նրբանկատ, աչալուրջ, խոհեմ:

Շրջան - 1. Պտույտ, դարձ: 2.Տևողություն, ժամանակաշրջան: 3.Փուլ: 4.Շրջանակ, ոլորտ:

Շրջանակ - 1. Շրջան, շրջանագիծ, շրջագիծ, բոլորակ, պարույրակ: 2.Լուսապսակ (սրբի): 3. Փեղկ: 4. Օղակապ (տակառի), գոտի:

Շրջանաձև - Բոլոր, բոլորակ, կլոր, կլորաձև, գնդաձև, պսակաձև:

Շրջանավարտ - Ընթացավարտ, դպրոցավարտ, ուսումնավարտ:

Շրջանցել - 1. Թևանցել: 2. Անտեսել: 3. (փխբ.) Խուսանավել, խուսափել:

Շրջապատ - 1. Շրջան, միջավայր: 2. Շրջավայր, շրջափակ:

Շրջապատել - Պաշարել, օղակել, շրջափակել, բոլորել, պարուրել, պատել:

Շրջապտույտ - Պտույտ, հորձանք, հորձանուտ, ոլորան, ջրապտույտ:

Շրջափակել - 1. Շրջապատել, պարփակել, եզերել: 2. Փակել, արգելակել, ներկալել: 3.Ցանկապատել, պարսպապատել, պարապել:

Շրջել[1] - 1. Դարձնել, բերել, ծռել: 2. Պտտել, շուռ ու մուռ տալ (հաճախ): 3. Թափել: 4. Հեղաշրջել: 5. Փոխել, վերափոխել:

Շրջել[2] - 1. Պտտվել, դառնալ: 2. Ճանապարհորդել, շրջագայել, երթևեկել, պտտել, զբոսնել, ճեմել: 3. Հածել, թափառել, դեգերել, ճամփորդել:

Շրջմոլիկ - Թափառական, թափառաշրջիկ, շրջիկ, դատարկաշրջիկ:

Շրջվել - Դառնալ, պտտվել, շուռ գալ:

Շուլալել - Շուլալակարել, բլանդել, ճզղակել:

Շուլալվել - 1. Փաթաթվել, կպչել: 2. Մզղակվել, բլանդվել:

Շուկա - Վաճառանոց, վաճառատեղի, վաճառավայր, առևտրավայր:

Շուն - Գամփռ (մեծ), գայլաշուն, բած (Էգը), բարակ, բերծե, ապականի (որսի), շնիկ, կուտիկ, բուբի(կ) (փոքր), բուչի:

Շունչ - 1. Շնչառություն, հևք: 2. Ազդեցություն, ներշնչում: 3.Անձ, անձնավորություն, մարդ, շնչավոր, հոգի, արարած, էակ: 4.Դադար, հանգիստ:

Շուտ - 1. Արագ, շտապ, հապճեպ, արագորեն, անմիջապես, իսկույն, իսկույնեթեր: 2. Վաղ, կանուխ, վաղուց, վաղօրոք, նախօրոք, նախապես:
Շուտահաս - Արագահաս, վաղահաս, կանխահաս:
Շուտափույթ - Շտապ, հապճեպ, արագ, հապշտապ:
Շուրբ - Շրթունք, պռոշ, պռունկ:
Շուրջ¹ - Բոլորտիք, չորսդի, շուրջբոլորը, չորսբոլորը:
Շուրջ² - 1. Մոտ, մոտավոր, մոտավորապես:2.Մասին, վերաբերյալ:
Շուրջառ - Փիլոն, նափորտ (վերարկու եկեղեցական):
Շուրջկալել - Շրջապատել, շուրջկալ անել, կալանք անել:
Շուք - 1. Ստվեր, շվաք: 2. Հետք, նշույլ: 3. (փխբ.) Հովանի, հովանավորություն, պաշտպանություն, սատար: 4. Շքեղություն, հանդիսավորություն:
Շփանալ - 1. Պարծենալ, պանծալ, խպարտանալ, փքվել, սնապարծել: 2.Լրբանալ, լպիրշանալ, հոփանալ:
Շփել - 1. Շոշափել, քսել, հպել: 2. Մաժել, ներսել, տրորել:
Շփերբ - Անփույթ, շփորիկ (խսկց.):
Շփոթ - Խառնակ, խառնաշփոթ, խառնիխուռն, խառնափնթոր, շիլա-շփոթ:
Շփոթել - 1. Խառնել, խառնակել: 2. Վրդովել, հուզվել:
Շփոթեցնել - 1. Խանգարել, սխալեցնել: 2. Մոլորեցնել, շվարեցնել, շփոթել:
Շփոթվել - 1.Շվարել, այլայլվել, հուզվել, խռովել, վրդովվել: 2. Ապշել, զարմանալ:
Շփվել - 1. Հաղորդակցվել: 2.Շոշափվել, քսվել, հպվել:
Շփում - 1. Հարաբերություն, հաղորդակցություն: 2. Մերսում, տրորում:
Շրախումբ - Թափոր, շքազունդ:
Շքահանդես - Հանդես, տոնահանդես:
Շքամուտք - Հանդիսամուտք, շքադուռ, գլխամուտք:
Շքեղ - Պերճ, փառահեղ, հոյակապ, շլացուցիչ, ակնապարար, ակնահաճո, ճաշակավոր, փառավոր, հանդիսավոր, մեծաշուք:
Շքեղազարդ - Պերճաշուք, շքեղաշուք, մեծաշուք, շքեղ, զարդարուն, պճնազարդ:
Շքեղաշուք - Շքեղ, պերճ, շքեղազարդ, փայլեցազեղ, մեծաշուք, պերճաշուք:
Շքեղացնել - Պերճացնել, ճոխացնել:
Շքեղություն - Փառավորություն, փառահեղություն, հոյակապություն, սքանչելիություն, ճոխություն, պերճություն, պերճանք, հանդիսավորություն, շուք, փառք:
Շքերթ - Երթ, թափոր:

Ո

Ոգեզմայլ - Հիասքանչ, չքնաղ, հիանալի, սքանչելի, զմայլելի, զգլխիչ, հմայիչ:
Ոգել - 1.Հնչել, արտաբերել, առոգել, արտասանել: 2.Գովերգել:
Ոգելից - Ալկոհոլային, արբեցուցիչ:
Ոգեկոչել - Կոչել, կանչել, արթնացնել (մեռած մարդկանց ոգիները):
Ոգեշնչել - Ոգևորել, ներշնչել, քաջալերել, խրախուսել, խանդավառել, բևավորել, զոտեպնդել, սրտապնդել, հորդորել:
Ոգևորել - 1. Քաջալերել, խանդավառել, խրախուսել, ներշնչել, ոգեշնչել, հորդորել բևավորել, սրտապնդել, զոտեպնդել: 2.Հուսադրել:
Ոգևորիչ - Խրախուսիչ, խրախուսական, քաջալերիչ, սրտապնդիչ, հուսադրիչ:
Ոգևորություն - 1.Խանդավառություն, ոգևորվածություն, ոգեշնչվածություն, քաջալերանք, սրտապնդություն, խրախուսանք: 2.Եռանդ, ներշնչանք:
Ոգեփաս - 1. Ոգեհարցուկ: 2. Երազատես:
Ոգի - 1. Կյանք, հոգի, շունչ: 2. Անձ, մարդ, անձնավորություն: 3. Ուրու, ուրվական, տեսիլ, ստվեր: 4. Դև, սատանա:

Ոգորել - 1. Մրցել, գոտեմարտել: 2. Պայքարել, մաքառել, մարտնչել, կռվել:
Ոլորան - 1. Կեռման, շրջադարձ: 2. Պտույտ, շրջապտույտ, հորձանուտ:
Ոլորապտույտ - Գալարապտույտ, զիգզագ, մանվածապատ, ծուռումուռ, օձապտույտ:
Ոլորել - 1. Գալարել, բոլորել, փաթաթել: 2. Հյուսել, մանել: 3. Դարձնել:
Ոլորտ - 1.Բնագավառ, մարզ, ասպարեզ (գործունեության): 2.Շրջան, շրջանակ:
Ոլորք - 1. Գալարք, հյուսք, ոլորվածք: 2. Գանգուր, խոպոպիք:
Ոլոռ - Սրունքոսկր:
Ոխ - Վրեժ, քեն, ոխակալություն, վրիժառություն, քինախնդրություն:
Ոխակալ - Վրեժխնդիր, վրիժառու, քինոտ, քինախնդիր, հիշաչար:
Ոխերիմ - Անհաշտ, երդվյալ, ուխտյալ (թշնամի):
Ոհմակ - 1. Գազանախումբ, գայլախումբ, ճահուկ (աղվեսների): 2.(փխբ.)Հրոսակ, ավազակախումբ (մարդկանց):
Ողբ - Լաց, կոծ, կական, լացուկոծ, հեծ, հեծեծանք, եղերգ, ախուվախ, վայնասուն, շիվան, ջայլ (բազմությամբ):
Ողբագին - Լալագին, լալահառաչ, արտասվագին, աղիողորմ, ողբալի:
Ողբալ - Լալ, կոծել, կականել, վայել, սգալ, հեծել, հեծեծել, արտասվել, ջայլել:
Ողբալի - Ողբագին, լալագին, տխրագին, թախծալի, աղիողորմ:
Ողբերգակ - 1. Ողբերգու, եղերերգակ, եղերերգու: 2. Ողբասաց:
Ողկույզ - Ճութ, կուզ, ողկուզակ:
Ողողել - 1. Հեղեղել, ոռոգել, ջրել: 2. Լցնել: 3. Թրջել, տոգորել: 4. Ցողել, ցայել:
Ողորկ - Կոկ, հարթ, հավասար, հղկուն, լերկ, ուղիղ:
Ողորկել - Հղկել, կոկել, հարթել, հարթեցնել, փայլեցնել:
Ողորմածիկ -Լուսահոգի, երջանկահիշատակ, հանգուցյալ, ննջեցյալ:
Ողորմել - 1. Գթալ, խղճալ,կարեկցել, արգահատել, մեղքանալ: 2.Ներել, խնայել:
Ողորմելի - 1. Խեղճ, թշվառ, խղճալի, ողբալի, ողբերգական, արգահատելի, եղկելի, խղճուկ, դժբախտ, թշվառական, քնձռոտ: 2. Չնչին:
Ողորմություն - 1. Գթություն, կարեկցություն, ողորմածություն, արգահատանք: 2.Նվիրատվություն, նպաստ, նվեր, շնորհ:
Ողոքել - Համոզել, հորդորել, շոյել, փաղաքշել, սիրտը շահել:
Ողջ - 1. Ամբողջ, բոլոր, բովանդակ: 2. Առողջ, կենդանի, առողջակազմ:
Ողջագուրվել - Փաթաթվել, գրկախառնվել, գգվել, համբուրվել:
Ողջակեզ - Զոհ, մատաղ, (հնց.) կենդանակեզ, ընծա, հաշտ (կուռքերի):
Ողջամիտ }
Ողջախոհ } -1. Խելամիտ, խելոք, խելացի, խոհեմ, գիտակից, լուրջ, լրջախոհ: 2.Զգոն, զգաստ: 3. Պարկեշտ, ժուժկալ, չափավոր:
Ողջույն - 1. Բարեւ, հարգանք: 2. Բարեմաղթություն, օրհնություն:
Ողջունելի - Գովելի (գործ, արարք):
Ոճ - 1. Գրելակերպ, խոսելակերպ, գրելաոճ, գրելաձեւ: 2. Կերպ, եղանակ, ձեւ:
Ոճավորել - 1. Ձեւավորել, երանգավորել: 2. Ոճաբանել, խմբագրել:
Ոճիր - Սպանություն, արյունահեղություն, հանցագործություն, հանցանք, ոճրագործություն, եղեռնագործություն, եղեռն, նախճիր, սպանդ:
Ոճրագործ - Հանցագործ, հանցապարտ, հանցավոր, եղեռնագործ, մարդասպան, չարագործ, մահապարտ, մեղապարտ:
Ոճրագործություն - Ոճիր, նախճիր, հանցագործություն, եղեռնագործություն, մարդասպանություն, չարագործություն, սպանություն, եղեռն:
Ոմն - Մարդ, անձնավորություն (անհայտ, անորոշ), անձ, էակ:
Ոչինչ - 1. Անգոյություն, անէություն: 2.Չնչին, աննշան, անկարեւոր, անպիտան:
Ոչխար - Խաշն, մաքի, խոյ:

Ոչխարանոց - Փարախ, ոչխարագոմ, մակաղ, մակաղատեղի:
Ոչնչանալ - 1. Անհետանալ, հատնել, սպառվել, վերանալ, անէանալ: 2.Կոտորվել, բնաջնջվել, կործանվել: 3. Շոգիանալ, ցնդել:
Ոչնչացնել - Վերացնել, կործանել, բնաջնջել, ջնջել, կոտորել, սպանել, մարել, գլխատել, անէացնել, փոշիացնել, անհետացնել:
Ոռնալ - Կաղկանձել, վնգստալ, վնկվնկալ:
Ոռոգել - 1. Ջրել, ջրարբել, հեղեղել, ողողել: 2. Ցողել, թրջել:
Ոսկեգանգուր - Ոսկեգիսակ, ոսկեհեր, ոսկեծամ, ոսկեվարս, ոսկեգես:
Ոսկեգույն - Ոսկեփայլ, ոսկեճաճանչ, ոսկեշող, ոսկեվառ, ոսկեթույր:
Ոսկեզօծել - Ոսկեջրել, ոսկեպատել, ոսկերել, ոսկնորել:
Ոսկեծամ - Ոսկեհեր, ոսկեգիսակ, ոսկեգանգուր, ոսկեվարս, ոսկեմազ:
Ոսկեշող - Ոսկեփայլ, ոսկեճաճանչ, ոսկեգույն, ոսկեվառ, ոսկեցոլք:
Ոսկեջրել - Ոսկեզօծել, ոսկեպատել, վարաղել:
Ոսկեվառ - Ոսկեփայլ, ոսկեշող, ոսկեճաճանչ, ոսկեգույն:
Ոսկեվարս - Ոսկեհեր, ոսկեծամ, ոսկեգես, ոսկեգանգուր, ոսկեմազ, ոսկեգեղմ:
Ոսկերիչ - Ոսկեգործ, ակնագործ:
Ոսկի - 1. Ոսկեդրամ, ոսկեփող: 2. Ոսկեղեն: 3. Գանձ, հարստություն: 4.(փխբ.) Թանկագին, թանկարժեք, ընտիր, լավ, գերազանց:
Ոսկրանալ - Կարծրանալ, պնդանալ, ամրանալ:
Ոսոխ - Հակառակորդ, թշնամի, ախոյան:
Ոստ - Ճյուղ, ուղեշ, մորճ (դալար), շառավիղ, շիվ, վազ, որթ:
Ոստայն - 1. Թել, ոստայնաթել: 2. Կտավ, պաստառ: 3. Սարդոստայն, ցանց:
Ոստայնագործ - Ջուլհակ, կտավագործ, ոստայնանկ:
Ոստան - 1. Մայրաքաղաք, քաղաքամայր, գահանիստ: 2. Երկրամաս:
Ոստիկան - 1. Միլիցիա, պահնորդ: 2. Մարզպան, կուսակալ:
Ոստյուն - Ցատկ, թռիչք, ցատկոց:
Ոստնել - Ցատկել (վեր), ոստոստել, ցատկոտել, թռչել:
Ոտաբոբիկ - Բոկոտն, բոբիկ, անկոշիկ, ոտաբաց:
Ոտանավոր - Բանաստեղծություն, չափածո, տաղ, քերթվածք:
Ոտնակոխ - Ոտնատակ, կոխան, առաքուր:
Ոտնահարել - 1. Աքացել, ոտնհարել, քացի տալ: 2. Արհամարհել, խախտել:
Ոտնահետք - Հետք, ոտնատեղի:
Ոտնաձայն - Ոտնատրոփ, քայլաձայն, դոփյուն:
Ոտնաման - Կոշիկ, մուճակ, մույկ, հողաթափ, երեսանկ, նալիկ , տրեխ, սոլ:
Ոտնատակ - 1.Ոտնակոխ, կոխան, առաքուր: 2.Ներքան, ոտատակ:
Ոտք - 1.Սրունք, ոտնաթաթ, թաթ: 2. Սմբակ, կճղակ, պճեղ (անասունի): 3.Վանկ (տաղաչափության մեջ): 4. Ոտնաչափ:
Որա - Խուրձ (ցորենի), կապ, կապոց, տրցակ, խռոմ (ժող.):
Որակ - Տեսակ, որպիսություն, հատկություն:
Որակազրկել - Խոտանել, ապաորակել, փչացնել:
Որակել - 1. Հորջորջել, կոչել, անվանել: 2. Կարգել:
Որակյալ - Որակավոր, ընտիր, բարձրորակ:
Որբ - Ծնողազուրկ, անծնող, անհայր, անմայր, որբուկ, եթիմ (բրբ.):
Որբանոց - Մանկատուն, որբատուն:
Որբևայրի - Այրի, անմարդ, անամուսին:
Որդ - 1. Ճիճու, զեռուն, ուտիճ, անձրևորդ, բրբուր, երնջակ: 2. Ցեց: 3. Երիզակ, երիզորդ (աղիքի): 4.Շերամ, մետաքսաճիճու, բոժոժ:
Որդան - Որդան կարմիր, կարմրաներկ, շիկակարմիր:

Որդեգիր - Հոգեզավակ, հոգեորդի, ուրջու:

Որդեգրել - 1.Զավակագրել: 2.Ընտրել, ընդունել, յուրացնել, վերցնել (գաղափար):

Որդեսեր - Զավակասեր, երեխասեր, մանկասեր:

Որդեսպան - Մանկասպան, զավակասպան:

Որդի - Զավակ, երեխա, տղա, որդյակ, մանչ, լաճ, ուստր:

Որթ - Վազ, որթատունկ:

Ործկալ - Փսխել, սիրտը խառնել,ործկտալ:

Որկոր - 1. Կերակրափող, բուկ, կոկորդ, փող: 2. Որկրամոլություն:

Որկրամոլ - Շատակեր, որովայնամոլ, պորտաբույծ, բկլատ, անհագ, անկուշտ:

Որչ - Արու, վարուժան (թռչուն):

Որչափ - Կոտած, ամորձատ, ծվանկ:

Որձաքար - Հատաքար, լեռ քար, ժեռ քար, լերջ (գրանիտ):

Որմ - 1. Պատ: 2. Պարիսպ:

Որմնադիր - Պատշար, քարագործ:

Որոգայթ - 1. Թակարդ, ծուղակ, դարան, ականատ, վարմ, հաղբ, ակ(ա)նատ, գայք:
2.Դավ, դավադրություն:

Որոճալ - 1. Ծամել, որոճել: 2. Մտածել, խոկալ:

Որոնել - Փնտրել, հետազոտել, հետամտել, խուզարկել, քրքրել, պրպտել, փնտրտել:

Որոշ - 1. Առանձին, ջոկ, զատ, ուրույն: 2. Ստույգ, ճիշտ: 3. Բացահայտ, պարզ, հայտնի, հստակ, որոշակի: 4. Ինչ-ինչ, ինչ-որ:

Որոշակի - Որոշակիորեն, որոշ, բացահայտ, հայտնի, պարզ, հստակ:

Որոշել - 1. Նախընտրել, նախագծել, կանխորոշել: 2.Վճռել, վճիռ կայացնել: 3. Զատել, ջոկել, ընտրել, զանազանել, տարբերել: 4. Ծրագրել:

Որոշիչ - 1.Հատկանշական, բնորոշ: 2.Վճռական, վճռողական:

Որոշում - 1. Կարգադրություն, հրահանգ, հրաման: 2. Վճիռ: 3. Եզրակացություն:

Որովայն - 1. Փոր: 2. Փորոտիք: 3. Արգանդ:

Որովհետև - Քանի որ, քանզի (բրբ.), զի, վասնզի (արևմտ.), ըստ որում:

Որոտ - Որոտյուն, թնդյուն, գոռոց, գոռգոռոց, դղրդոց, դղրդյուն, թնդոց, դղիրդ:

Որոտալ - Գոռալ, դղրդալ, շառաչել, շչել, թնդալ, գոռգոռալ, գոգռալ:

Որոտաձայն, **Որոտընդոստ** -Բարձրաձայն, բարձրագոչ, բարձրահնչյուն, մեծագոչ, որոտալի, ահեղագոչ, ամպագոռգոռ:

Որչափ - Որքան, քանի, ինչքան:

Որպես - 1. Ինչպես, իբր, ինչպես որ: 2. Որպեսզի:

Որպեսզի - Որպես, որ, թե, վասնզի (արևմտ.):

Որպիսի - Ինչպիսի:

Որպիսություն - 1. Վիճակ, դրություն, կացություն, հանգամանք, պայման: 2.Հատկություն, որակ: 3. Առողջություն, ողջություն:

Որջ - 1. Փոս, խոռոչ, ծերպ: 2. Բույն, գազանաբույն: 3. Պատսպարան, բաքստոց, ավազականոց, ավազակաբույն:

Որս - 1.Երե (հնց.): 2.Որսորդություն:

Որսալ - 1. Կարթել, բռնել, ցանցել (ձուկ), խփել, զարնել (թռչուն): 2. Հրապուրել, թակարդը գցել (մարդ):

Որսաշուն - Բարակ, բերծե (էգը), պառական:

Որսացանց - Թակարդ, որսածուղակ, ծարացանց, վարմ, դամ:

Որսորդ - Որսկան, որսակ(ան), որսոն:

Որքան - 1. Այնքան, ինչքան, որչափ: 2. Ինչքան որ, որչափ որ:

Չ

Չալ - Խատուտիկ, խայտաբղետ, բծավոր, չալպտուրիկ:
Չալիկ - Ձեռնափայտ, գավազան, մականն, ցուպ, մահակ, ասա (եպիսկ.):
Չախկալ - Ծնագալ, գայլաշուն, չախալ:
Չախմախ - Կայծքար, սատանի քար(եղունգ):
Չաղանալ - 1. Գիրանալ: 2. Հարստանալ:
Չամիչ - Քիշմիշ, չամչահատիկ:
Չանգ - Ճանկ, ճիրան, մագիլ, եղունգ:
Չանթել - Հափշտակել, թոցնել:
Չանչել - 1.Անիծել, նզովել: 2.Խփել, հարվածել (չանչով):
Չար - 1. Չարասիրտ, չարակամ, չարամիտ, նենգ, նենգամիտ, ոխակալ, քինոտ, քինախնդիր, նեռ: 3. Դժնի, դաժան: 4. Չարաճճի, անկարգ:
Չարաբախտ - Դժբախտ, անբախտ, թշվառ, ծախորդ, չարաբաստիկ:
Չարաբաստիկ - Դժբախտ, անբախտ, ապաբախտ, թշվառ, ծախորդ, ապերջանիկ:
Չարագործ - Ոճրագործ, հանցագործ, հանցավոր, մեղապարտ, մեղադրյալ, ամբաստանյալ, մեղավոր, եղեռնագործ, վնասարար:
Չարագույժ - 1. Չարալուր: 2. Չարագուշակ:
Չարագուշակ - Չարագույժ, չարաղետ, բոթաբեր, աղետալի, աղետաբեր:
Չարախինդ - Չարակամ, չարանենգ, չարաժպիտ:
Չարախոսել - Զրպարտել, բամբասել, բանսարկել, ամբաստանել, պախարակել, վատաբանել, նենգախոսել::
Չարակամ - Չարամիտ, չարախինդ, չարասիրտ, չարանենգ, չար, թշնամի:
Չարաճճի - Աչխույժ, անհանգիստ, ժիր, աչքաբաց, չար, անկարգ:
Չարամիտ - Չարախոհ, չարակամ, չարանենգ, չար, նենգ, նենգամիտ, չարախինդ:
Չարանալ - 1. Բարկանալ, վրդովվել, զայրանալ, կատաղել, ջղայնանալ, գազազել, մոլեգնել: 2. Նախանձել, օձանալ:
Չարանենգ - Չարամիտ, չարադավ, չար, նենգադավ, նենգամիտ:
Չարաշահել - Չարարկել, ի չարը գործադրել, չահարկել:
Չարաչար - 1. Չար, դաժան, դժնդակ: 2. Սաստիկ, չափազանց, անտանելի:
Չարասիրտ - 1. Չարասեր, չարակամ, չարամիտ, չկամ, դժկամ: 2. Դաժան, անգութ, անխիղճ, անագորույն, վայրագ, ժանտ, դժնի, դժնդակ:
Չարիք - Աղետ, դժբախտություն, փորձանք, պատուհաս:
Չարխ - 1.Ճախարակ: 2.Անիվ: 3.Բախտ, ճակատագիր, բախտանիվ:
Չարչարանք - 1. Տանջանք, տառապանք, վիշտ, տվայտանք, դառնություն: 2.Լլկանք, կտտանք, խոշտանգում: 3. Նեղություն, անհանգստություն:
Չարչարել - Տանջել, խոշտանգել, կտտել, տառապեցնել, խաչել, մարտիրոսել, պատժել, պատուհասել, տվայտել, չարչրկել, դաղել, լլկել:
Չարչի - Մանրավաճառ, վաճառական, առեւտրական, փերեզակ, կինտո:
Չարչրկել - Տանջել, չարչարել, խոշտանգել, կտտել, տառապեցնել:
Չարություն - 1. Նախանձ, չարամտություն, չարախնդություն, նենգություն: 2.Բարկություն, զայրույթ: 3. Անկարգություն, չարաճճիություն:
Չարք - Չար ոգի, սատանա:
Չարքաշ - Տաժանելի, տաժանակիր, դժվարին, տքնաջան, դժնդակ, տանջալից:
Չափ - 1. Չափս, մեծություն, ծավալ, քանակ: 2. Չափանիշ: 3. Աստիճան, դրություն, սահման: 4. Հավասար, համեմատ:
Չափազանց - Սաստիկ, խիստ, ծայրահեղ, չափից դուրս:
Չափազանցնել - Գերագնահատել, լուն ուղտ շինել: Գունազարդել (փխբ.):

Չափածո - 1. Բանաստեղծական: 2. Բանաստեղծություն, պոեզիա:
Չափահաս - Հասուն, հասած, չափահասակ:
Չափանիշ - Չափ, ցուցանիշ, ստուգանիշ:
Չափավոր - 1. Բարեխառն, մեղմ: 2. Պարկեշտ, զուսպ, ժուժկալ, սահմանափակ:
Չափավորել - 1.Մեղմել, մեղմացնել, բարեխառնել: 2.Նվազեցնել, պակասեցնել, իջեցնել, թեթևացնել: 3.Սահմանափակել:
Չափավորություն - 1.Մեղմություն, բարեխառնություն (կլիմայի): 2.Պարկեշտություն, ժուժկալություն:
Չափել - Բաղդատել, համեմատել:
Չբեր - Ամուլ, անբերրի, անպտուղ, անբեղուն, անծին, ստերջ:
Չեզոք - 1. Անմասն, անտարբեր: 2. Միջին:
Չեզոքանալ - Մեկուսանալ, առանձնանալ, միայնանալ, կղզիանալ:
Չեչոտ - Ծաղկատար, ծաղկադեմ:
Չիչխան - 1. Փչարմավ, ժանտափուշ: 2. Փշալից, դափնի:
Չխկոց - Թխկոց, թրխկոց, շրխկոց, շխկոց, չխկչխկոց:
Չխոս - 1. Լռակյաց: 2. Չխոսկան:
Չկամ - Անբարյացակամ, չարասիրտ, անկամորդ, նախանձ(ոտ):
Չհաս - Անհաս (ամուսնություն):
Չմահավան - 1. Դժվարահավան, քմահաճ, բծախնդիր: 2. Մեծամիտ:
Չնաշխարհիկ - Անզուգական, սքանչելի, աննման, հազվագյուտ, չքնաղ, սիրուն:
Չնչին - Աննշան, փոքր, թույլ, քիչ, անարժեք, անարգ, ճղճիմ, նվաստ:
Չոր - 1. Ցամաք: 2. Չորուցամաք, ցամաք (հաց): 3.Գոս, վտիտ, լղար, ցամքած: 4.Անանձրեւ, երաշտ, չորային: 5.Կոպիտ, կոշտ, բիրտ:
Չորային - Անանձրեւ, երաշտ, չոր (եղանակ):
Չորանալ - 1. Ցամաքել: 2. Կարծրանալ (հացը): 3. Գոսանալ, կնճռել (կաշին): 4.Ազազել, կծղել (բույսը):
Չորեքթաթ - 1. Չոչ: 2. Չոքեչոք, ծնկաչոք:
Չորսու - Գերան (քառակող):
Չորքոտանի - Անասուն, կենդանի (ընտանի), չորստտանի:
Չոքել - 1. Ծնրադրել, ծնկել, ծունր դնել: 2. Ծնկի գալ, պարտվել, հաղթվել:
Չվան - Ճոպան, թոկ, պարան, մալուխ(կաբել), առասան, կապ, լար, կառան, պախուրց:
Չվացուցակ - Երթացուցակ, ժամանակացուցակ, չվամատյան:
Չվել - Մեկնել, գնալ, երթալ, գաղթել, թռչել:
Չտես - Ծակաչք, ապատես, նորատես:
Չրխկոց - Թխկոց, շրխկոց, շխկոց, թրխկոց, չխկոց:
Չու - 1. Երթ, մեկնում, գաղթ, ընթացք, գնացք, չվերթ: 2. Թռիչք: 3. Քոչ:
Չուգուն - Թուջ, ձուլերկաթ:
Չույ - Քուրձ, ցնցոտի, հնոտի, փալաս, քուրջ, լաթ:
Չուխա - 1. Ասվի, ասվեղեն: 2. Մահուդ:
Չունեւոր - Չքավոր, աղքատ, խեղճ, թշվառ, ընչազուրկ, տնանկ, կարիքավոր:
Չքանալ - Աներեւութանալ, անէանալ, անհետանալ, չքվել, կորչել, ցնդել:
Չքավոր - Չունեւոր, աղքատ, խեղճ, թշվառ, տնանկ, ընչազուրկ, կարիքավոր:
Չքմեղ - Անմեղ, արդար, անմեղապարտ, անմեղսակից:
Չքնաղ - Աննման, սքանչելի, չնաշխարհիկ, անզուգական, մոգական, գեղեցիկ, սիրուն, վայելչագեղ, չքնաղագեղ, հոյակապ, հրաշագեղ:
Չքնաղագեղ - Չքնաղ, հրաշագեղ, գեղեցիկ, սիրուն, գեղեցկադեմ, գեղատեսիլ:
Չքնաղակերտ - Հրաշակերտ, հոյակապ, փառավոր, շքեղ, հոյաշեն, հոյակերտ:
Չքվել - Չքանալ, աներեւութանալ, անէանալ, անհետանալ, կորչել, ցնդել:

Պ

Պագ - Համբույր, պաչ:
Պագշոտ - Վավաշոտ, ցանկասեր, ցանկամոլ, տռփոտ, տռփասեր, անառակ, անբարոյական, ցոփ, բոզախոհ:
Պարոս - Խանդավառություն, ոգևորություն:
Պալատ - 1. Ապարանք, արքունիք, դղյակ: 2. Հիվանդասենյակ:
Պալատական - Արքայական, արքունական, թագավորական, դրանիկ:
Պալար - Ուռուցք, այտուց, բուշտ, թարախապալար, չիբան:
Պալարախտ - Թոքախտ, բարակցավ, բարակախտ, հյուծախտ, ծյուրախտ:
Պախարակել - Պարսավել, մեղադրել, քամահրել, նախատել, վատաբանել, կշտամբել, փնովել, անգոսնել:
Պախրա -Այծյամ, կխտար, գազել, վիթ, ջեյրան, այծեմնիկ, համույր:
Պախուրց - Սանձ, երասան, շրուշակ, երասանակ:
Պակաս - 1. Նվազ, քիչ, սակավ: 2. Բացակա: 3. Թերի, անկատար:
Պակասամիտ - Ապուշ, հիմար, խելապակաս, ծանծաղամիտ, կարճամիտ, տկարամիտ, թեթևամիտ, խելագար, խենթ, խեւ, խելառ, գիժ:
Պակասավոր - 1. Թերի, անկատար, կիսակատար: 2.Արատավոր, հաշմանդամ:
Պակասել - 1. Նվազել, քչանալ: 2. Բացակայել (մի բան):
Պակասություն - 1. Թերություն, բաց, արատ, անկատարություն: 2. Նվազություն, քչություն, սակավություն: 3. Կարիք, կարոտ: 4. Բացակայություն: 5. Արատավորություն, խեղանդամություն, հաշմանդամություն:
Պահ - 1. Վայրկյան, ակնթարթ, ակնաքթիթ: 2. Ժամանակ, ժամանակամիջոց:
Պահակ - 1. Պահապան, հսկիչ: 2. Գիշերապահ, գիշերապահակ:
Պահանջ / **Պահանջարկ** } - 1. Առք, առնելիք, պահանջելիք: 2. Պետք, կարիք: 3. Պահանջմունք 4. Հայց: Հայցապահանջ:
Պահանջել - 1. Ստիպել, հարկադրել, պարտադրել, հրամայել, թելադրել: 2. Ուզել: 3.Կարգադրել, առաջարկել
Պահանջկոտ - Պահանջախնդիր, խստապահանջ:
Պահապան - Պահակ, գիշերապահ, պահնորդ, հսկիչ, մթերապահ, դռնապահ: 2.Անձնապահ, թիկնապահ, համհարզ (անձի):
Պահարան - 1. Հանդերձապահարան, զգեստապահարան: 2.Դարան: Խորշադարան:
Պահել - 1. Պահպանել, հսկել, պաշտպանել: 2. Պատսպարել, թաքցնել: 3.Պահ տալ, տեղավորել, հորել: 4. Բռնել, սանձել: 5. Խնամել, հոգալ, սնել, սնուցել:
Պահեստ - Պահեստարան, պահեստանոց, ամբար, շտեմարան, մթերանոց, մառան (սննդամթերքի), հարդանոց (հարդի), մարագ (խոտի):
Պահնորդ - 1. Պահապան: 2. Ոստիկան:
Պահպանակ - 1. Հմայիլ, հուռութք, չարխափան: 2. Զրահ, սաղավարտ (գլխի), բազպան (բազկի), սռնապան: 3. Զսպաշապիկ:
Պահպանել - 1. Պաշտպանել, պահել, հսկել, պատսպարել: 2. Ապահովել:
Պահվել - Թաքնվել, ծածկվել, ծվարել:
Պահք - Պաս,ծոմ, պահեցողություն:
Պաղ - 1. Ցուրտ, սառը: 2. Անսիրտ, անզգա, չոր: 3. Սառույց:
Պաղատանք - Աղերսանք, աղաչանք, խնդիրք, աղերս:
Պաղատել - Աղաչել, աղերսել, թախանձել, խնդրել, հայցել:
Պաղել - Սառչել, մրսել, ցրտահարվել, ցրտել:
Պաղպաջուն - Փայլուն, փայլփլուն, պսպղուն, շողշողուն:

Պաճուճանք - Զարդ, զարդարանք, պճնանք, պչրանք:
Պաճուճապատանք - Խրտվիլակ, տիկնիկ, պուպրիկ, խամաճիկ:
Պաճուճվել - Զարդարվել, զուգվել, պճնվել, պճնազարդվել, պչրվել:
Պայազատ - 1. Ազնվական: 2. Ժառանգ, սերունդ, հաջորդ, գավակ (իշխանի):
Պայազատել - 1. Հաջորդել, ժառանգել: 2. Իշխել, տիրել:
Պայթել - 1. Տրաքվել, ճայթել: 2. Պոռթկալ:
Պայլ - Իշխան, մելիք, բեկ, աղա:
Պայծառ - 1. Լուսավոր, լուսափայլ, փայլուն, վառվռուն: 2. Հստակ, ջինջ, վճիտ, ականակիտ, պարզ, անամպ (եղանակ): 3. Ուրախ, զվարթ (դեմք):
Պայծառանալ - 1. Հստականալ, հստակվել, ջինջանալ: 2. Արփիանալ, փայլել: 3.Գեղեցկանալ, շքեղանալ: 4. Աշխուժանալ:
Պայծառափայլ - Գեղափայլ, ճաճանչափայլ, լուսափայլ, լուսաշող:
Պայման - 1. Հանգամանք, պարագա, վիճակ, դրություն, կացություն: 2.Դաշինք, դաշն, ուխտ, համաձայնություն:
Պայմանագիր - 1. Դաշնագիր, համաձայնագիր, դաշինք: 2. Պարտավորագիր:
Պայմանական - Թեական, ենթադրական:
Պայմանավորվել - 1. Համաձայնվել, ուխտել: 2. Ժամադրվել:
Պայտար - Պայտագործ, պայտահար, նալբանդ, նալչի (ժող.):
Պայուսակ - Պարկ, մախաղ:
Պայքար - Կռիվ, վեճ, մաքառում, ոգորում, գոյամարտ, գոյապայքար:
Պայքարել - 1.Մարտնչել, մաքառել, ոգորել, կռվել, գոտեմարտել, ընդդիմանալ: 2.Վիճաբանել, բանավիճել, վիճել: 3.Մրցել:
Պանդխտություն - Օտարություն, նժդեհություն, դարիբություն, աստանդություն, վտարանդիություն:
Պանդոկ - 1. Ճաշարան, գինետուն, մեկիտան: 2. Հյուրանոց, իջեւանատուն:
Պանդուխտ - Վտարանդի, օտարական, գաղթական, նժդեհ, աստանդական, տարագիր, (բրբ.) դարիբ:
Պանթեոն - 1. Դիցարան: 2. Գերեզմանատուն, շիրմատուն, հանգստարան:
Պանծալի - Սխրալի, գովելի, փառավոր, փառապանծ, մեծափառ, հռչակավոր:
Պաշար - Պարեն, սնունդ, պարենամթերք, սննդամթերք, ուտելիք, նպարեղեն:
Պաշարել - Շրջապատել, շրջափակել, պատել, օղակել, բոլորել, թեւանցել:
Պաշտամունք - Երկրպագություն, դավանություն, դավանանք, կուռք:
Պաշտել - 1. Երկրպագել, դավանել, հավատալ: 2. Սիրել, մեծարել:
Պաշտելի - Սիրելի, նվիրական:
Պաշտոն - 1. Դիրք, աստիճան, (փխբ.) աթոռ: 2. Գործ, զբաղմունք, պաշտոնավարություն: 3. Կիրառություն (քերականական):
Պաշտոնակից - Պաշտոնագործ, պաշտոնընկեր, գահընկեր:
Պաշտոնավոր - Աստիճանավոր, պաշտոնյա, ծառայող, պաշտոնատար:
Պաշտոնյա - 1.Պաշտոնավոր, աստիճանավոր, ծառայող: 2.Պաշտոնակալ, պաշտոնատար:
Պաշտպան - 1. Հովանավոր, խնամակալ, օգնական, նեցուկ, հենարան, (փխբ.) թիկունք, թեւ-թիկունք, զորավիգ, մեկենաս, տեր, սատար, հովանի, կողմնակից, ջատագով: 2. (իրավ.) Փաստաբան, դատապաշտպան:
Պաշտպանել - Պատսպարել, պահպանել, պահել, հովանավորել, խնամակալել, սատարել, ջատագովել, նեցուկ լինել:
Պաշտպանվել - 1.Հովանավորվել: 2.Դիմադրել, դիմագրավել: 3.Արդարանալ, չքմեղանալ:
Պաշտպանություն - 1. Պատսպարություն, հովանավորություն, խնամակալություն, խնամք, հոգատարություն: 2.Ապահովություն, ինքնապաշտպանություն:

Պաչել - Համբուրել, համբույր տալ, պագնել:
Պապ - 1. Պապի, պապիկ, մեծ հայր: 2. Նախահայր, նախապետ, նախնիք: 3.Քահանայապետ, արքայապետ (Հռոմի): 4. Ծերուկ:
Պապակ - 1. Ծարավ, ծարավություն: 2. Փափագ, տենչանք, տենչ, կարոտ:
Պապակել - 1. Ծարավել, տոչորվել: 2. Փափագել, տենչալ,կարոտել:
Պապանձվել - Պապանձել, լռել, համրանալ, մնջանալ, կարկամել:
Պապենական - Պապական, հայրական, հայրենական, հայրենի, հին, հնամենի, հնամյա, հնօրյա, վաղեմի:
Պառակտել - Բաժանել, ջլատել, անջատել:
Պառակտվել - 1.Բաժանվել, զատվել: 2.Հերձվածել, անջատվել (եկեղեցու):
Պառավել - Ծերանալ, ալեւորել, զառամել, պառավանալ:
Պառկել - Ընկողմանել, մեկնվել, տարածվել, փռվել:
Պաս - Պահեցողություն, ծոմ, պահք, ծոմապահություն:
Պաստառ - 1. Կերպաս, դիպակ (մետաքսի), ասվի (բրդե), կտավ (բամբակե), քաթան (վուշե): 2. Որմաթուղթ (թղթից): 3. Էկրան:
Պատ - 1. Որմ, միջնորմ: 2. Պարիսպ, պատվար, ցանկապատ:
Պատահաբար - Դիպվածաբար, պատահմամբ, հանկարծ, բարեբախտաբար:
Պատահար - 1. Աղետ, փորձանք, դժբախտություն, արկած: 2. Միջադեպ: 3.Պատահմունք, դիպված, դեպք:
Պատահել - Կատարվել, լինել, զուգադիպել, տեղի ունենալ, հանդիպել:
Պատանդ - 1. Գերի: 2. Գրավ, գրավական:
Պատանեկություն - Պարմանիություն, երիտասարդություն, ջահելություն:
Պատանի - Երիտասարդ, պարմանի, ջահել, պատանյակ:
Պատանք - Պատան, դիապատանք, պաստառ, սավան:
Պատառ - Բրդուճ, կտոր, մաս, բեկոր, փերթ, ծվեն:
Պատառոտել - Պատռել, պատռտել, բզկտել, ճղճղել, քրքրել, գզել, գզգզել, ծվատել, կտրտել, ճղել, հոշոտել, գիշատել:
Պատասխանատու - 1. Երաշխավոր: 2.Բարձրապաշտոն:
Պատասխանել - Արձագանքել, ասել, պատասխան տալ, վրա բերել:
Պատարագ - 1. Ժամերգություն, ժամասացություն: 2. Հոգեհանգիստ, զոհ, մատաղ:
Պատգամ - 1. Պատվեր, պատվիրան, ավանդ: 2. Հրաման: 3. Խնամախոս:
Պատգամաբեր - 1.Դեսպան: 2. Բանբեր, լրաբեր, համբավաբեր, սուրհանդակ:
Պատգամավոր - 1. Դեպուտատ, երեսփոխան: 2. Ներկայացուցիչ, լիազոր: 3.Բանագնաց: 4. Պատգամաբեր: 5. Հրեշտակ, առաքյալ:
Պատգարակ - Կրանակ (հիվանդների), գահավորակ, բառնալիք,դարգիճ:
Պատել - 1. Պարսպել, ցանկապատել: 2. Շրջապատել, պաշարել, շրջափակել: 3. Փակել, ծածկել, գոցել: 4.Տիրել, համակել: 5. Ծեփել:
Պատեհ - Հարմար, պատշաճ, վայելուչ, արժանավայել:
Պատեհապաշտ - Հարմարվող, հարմարվողական:
Պատենտ - Արտոնագիր, արտոնաթուղթ:
Պատերազմ - Կռիվ, մարտ, ճակատամարտ, պայքար, գուպար:
Պատերազմել - Կռվել, ճակատամարտել, ճակատել, մարտնչել, ոգորել, գուպարել:
Պատժել - 1. Դատապարտել: 2. Պատուհասել: 3. Ծեծել:
Պատիժ - 1. Դատապարտություն: 2. Տույժ, տուգանք: 3. Դատաստան: 4. Պատժաչափ: 5. Պատուհաս, փորձանք, չարիք:
Պատին - Պատյան, պաճույկ, խնեճ (բամբակի):
Պատիվ -1. Հարգանք, մեծարանք, պատկառանք, ակնածանք: 2. Դիրք, աստիճան, վարկ, համբավ, հռչակ, անուն, համարում, փառք, հարգ, արժեք: 3. Անարատություն, անաղարտություն, կուսություն: 4.Նամուս:

Պատիր - Խաբուսիկ, կեղծ, սուտ, սին, սնամեջ:
Պատկանել - Վերաբերել, վերաբերվել, սեփական լինել:
Պատկառանք - 1.Ամոթ, ամոթխածություն: 2.Ակնածություն, հարգանք, մեծարանք:
Պատկառել - 1. Ակնածել, հարգել, պատվել, մեծարել: 2. Ամաչել, քաշվել:
Պատկառելի - 1. Հարգելի, ակնածելի, պատկառազդու: 2. Կարևոր, խոշոր, մեծ:
Պատկեր - 1. Կերպարանք, դեմք: 2. Նկար, դիմանկար, լուսանկար, սրբանկար: 3.Խորհրդանիշ: 4. Տեսարան (թատր.):
Պատկերազարդ - Նկարազարդ, նախշազարդ:
Պատկերանալ - 1. Ներկայանալ, պատկերվել, երևալ, թվալ, հայտնվել, գալ, երևութանալ: 2. Նկատվել:
Պատկերացնել - Նկարագրել, պատկերել, ներկայացնել, կերպավորել, տպավորել, արտահայտել, արտացոլել, բացատրել:
Պատկերել - Պատկերացնել, արտահայտել, արտացոլել, նկարագրել, կերպավորել, տպավորել, ներկայացնել, բացատրել, գծել, նկարել:
Պատճառ - Շարժառիթ, դրդապատճառ, առիթ, հիմք, տեղիք, պատրվակ:
Պատճառաբանել - 1. Պատրվակել: 2. Փաստարկել, հիմնավորել, տրամաբանել:
Պատճառաբանություն - Ապացույց, փաստ, փաստարկ, հիմնավորում, պատճառաբանում, փաստարկում:
Պատճեն - 1. Կրկնատիպ, կրկնօրինակ, ընդօրինակություն: 2. Նման, նմանակ:
Պատճենել / ***Պատճենահանել*** - 1. Արտատպել, ընդօրինակել, կրկօրինակել, նմանահանել, պատճենավորել:
Պատմագիր - Պատմիչ, մատենագիր:
Պատմական - 1.Պատմաբանական, պատմագիտական, պատմագրական: 2.Վաղնջական, հին, վաղեմի, անցյալ: 3.Դարակազմիկ:
Պատմել - 1.Ասել, հաղորդել, տեղեկացնել: 2.Նկարագրել,գրել, տեղեկագրել: 3.Զրուցել
Պատմվածք - 1. Գրվածք, նորավեպ: 2. Պատմություն:
Պատմություն - 1. Պատմվածք, պատում: 2. Զրույց, 3. Մատենագրություն: 4. Առասպել (շինծու): 5. Հերյուրանք (սուտ): 6. Ավանդություն (անգիր):
Պատմուճան - Պարեգոտ, զգեստ, վերարկու, բաճկոն:
Պատյան - 1. Կեղև, բոժոժ (շերամի), պաճ, պարկուճ (ընդեղենի), պատիճ (հունդի), խճեճ (բամբակի), խեցի (կրիայի):
Պատնեշ - 1. Ամբարտակ, պատվար, հողաբլուր, թումբ: 2. Անջրպետ, ցանկապատ, շրջափակ, ցցապատնեշ, ձողապատնեշ:
Պատնեշել - 1.Ամբարտակել, թմբապատել, առաջն առնել: 2.Ցանկապատել, ցցապատել, շրջափակել, պարսպել, պարսպապատել:
Պատշաճ - Վայելուչ, հարմար, պատեհ, տեղին, համապատասխան, սազական, արժանի, արժանավայել:
Պատշար - Որմնադիր, քարագործ:
Պատռել - 1.Ճղել, ճեղքել, հերձել: 2. Հերկել, ակոսել (հողը): 3.Պատառոտել:
Պատսպարան - Ապաստան, ապաստարան, ապավեն, օթևան, հովանի:
Պատսպարել - 1. Պահպանել, օթևանել, սատարել, ապաստանել: 2. Թաքցնել:
Պատսպարվել - Ապաստանվել, օթևանել, ապավինել, պաշտպանվել:
Պատվազուրկ - Անպատիվ, վարկաբեկ, վատահամբավ, անարգ, անբարո:
Պատվախնդիր - Պատվասեր, փառասեր, փառատենչ, պատվամոլ, փառամոլ:
Պատվական - 1. Պատվարժան, պատվավոր, մեծարգո, արգո, մեծապատիվ, հարգարժան, գերապատիվ, արժանապատիվ, պատվելի: 2. Ընտիր, ազնիվ:
Պատվանդան - (ճարտ.) Խարիսխ, հենարան:
Պատվանուն - Տիտղոս, կոչում:

Պատիր - Խարդախ, կեղծ, սուտ, սին, սնամեջ:
Պատկանել - Վերաբերել, վերաբերվել, սեփական լինել:
Պատկառանք - 1.Ամոթ, ամոթխածություն: 2.Ակնածություն, հարգանք, մեծարանք:
Պատկառել - 1. Ակնածել, հարգել, պատվել, մեծարել: 2. Ամաչել, քաշվել:
Պատկառելի - 1. Հարգելի, ակնածելի, պատկառազդու: 2. Կարեւոր, խոշոր, մեծ:
Պատկեր - 1. Կերպարանք, դեմք: 2. Նկար, դիմանկար, լուսանկար, սրբանկար: 3.Խորհրդանիշ: 4. Տեսարան (թատր.):
Պատկերազարդ - Նկարազարդ, նախշազարդ:
Պատկերանալ - 1. Ներկայանալ, պատկերվել, երեւալ, թվալ, հայտնվել, գալ, երեւութանալ: 2. Նկատվել:
Պատկերացնել - Նկարագրել, պատկերել, ներկայացնել, կերպավորել, տպավորել, արտահայտել, արտացոլել, բացատրել:
Պատկերել - Պատկերացնել, արտահայտել, արտացոլել, նկարագրել, կերպավորել, տպավորել, ներկայացնել, բացատրել, գծել, նկարել:
Պատճառ - Շարժառիթ, դրդապատճառ, առիթ, հիմք, տեղիք, պատրվակ:
Պատճառաբանել - 1. Պատրվակել: 2. Փաստարկել, հիմնավորել, տրամաբանել:
Պատճառաբանություն - Ապացույց, փաստ, փաստարկ, հիմնավորում, պատճառաբանում, փաստարկում:
Պատճեն - 1. Կրկնատիպ, կրկնօրինակ, ընդօրինակություն: 2. Նման, նմանակ:
Պատճենել
Պատճենահանել } - 1. Արտատպել, ընդօրինակել, կրկօրինակել, նմանահանել, պատճենավորել:
Պատմագիր - Պատմիչ, մատենագիր:
Պատմական - 1.Պատմաբանական, պատմագիտական, պատմագրական: 2.Վաղնջական, հին, վաղեմի, անցյալ: 3.Դ-արակազմիկ:
Պատմել - 1.Ասել, հաղորդել, տեղեկացնել: 2.Նկարագրել,գրել, տեղեկագրել: 3.Զրուցել
Պատմվածք - 1. Գրվածք, նորավեպ: 2. Պատմություն:
Պատմություն - 1. Պատմվածք, պատում: 2. Զրույց, 3. Մատենագրություն: 4. Առասպել (շինծու): 5. Հերյուրանք (սուտ): 6. Ավանդություն (անգիր):
Պատմուճան - Պարեգոտ, զգեստ, վերարկու, բաճկոն:
Պատյան - 1. Կեղեւ, բոժոժ (շերամի), պաճ, պարկուճ (ընդեղենի), պատիճ (հունդի), խճեճ (բամբակի), խեցի (կրիայի):
Պատնեշ - 1. Ամբարտակ, պատվար, հողաբլուր, թումբ: 2. Անջրպետ, ցանկապատ, շրջափակ, ցցապատնեշ, ծողապատնեշ:
Պատնեշել - 1.Ամբարտակել, թմբապատել, առաջն առնել: 2.Ցանկապատել, ցցապատել, շրջափակել, պարսպել, պարսպապատել:
Պատշաճ - Վայելուչ, հարմար, պատեհ, տեղին, համապատասխան, սազական, արժանի, արժանավայել:
Պատշար - Որմնադիր, քարագործ:
Պատռել - 1.Ճղել, ճեղքել, հերձել: 2. Հերկել, ակոսել (հողը): 3.Պատառոտել:
Պատսպարան - Ապաստան, ապաստարան, ապավեն, օթեւան, հովանի:
Պատսպարել - 1. Պահպանել, օթեւանել, սատարել, ապաստանել: 2. Թաքցնել:
Պատսպարվել - Ապաստանվել, օթեւանել, ապավինել, պաշտպանվել:
Պատվազուրկ - Անպատիվ, վարկաբեկ, վատահամբավ, անարգ, անբարո:
Պատվախնդիր - Պատվասեր, փառասեր, փառատենչ, պատվամոլ, փառամոլ:
Պատվական - 1. Պատվարժան, պատվավոր, մեծարգո, արգո, մեծապատիվ, հարգարժան, գերապատիվ, արժանապատիվ, պատվելի: 2. Ընտիր, ազնիվ:
Պատվանդան - (ճարտ.) Խարիսխ, հենարան:
Պատվանուն - Տիտղոս, կոչում:

Պատվասեր - 1. Պատվախնդիր, հյուրասեր, հյուրամեծար: 2. Փառասեր, փառամոլ:
Պատվաստ - Պատրուս, պատվաստաշիվ:
Պատվավոր - Պատվարժան, հարգարժան, պատվական, պատկառելի, մեծարգո:
Պատվար - 1. Պատնեշ, ամբարտակ, հողաբլուր, թումբ: 2. Ամրոց:
Պատվարժան - Արժանապատիվ, պատվավոր, հարգարժան, մեծապատիվ:
Պատվել - 1. Հարգել, մեծարել, ակնածել, պատկառել: 2. Հյուրասիրել, ասպնջակել:
Պատվեր - Հրաման, կարգադրություն, հրահանգ, հանձնարարություն, առաջադրանք, խրատ, պատվիրան, ապսպրանք:
Պատվիրակ - 1. Պատգամավոր: 2. Պատգամաբեր, ներկայացուցիչ:
Պատվիրան - Պատվեր, պատգամ, ավանդ, կամք, խրատ, ապսպրանք, հրաման, հրահանգ, հանձնարարություն:
Պատվիրել - Հանձնարարել, ապսպրել, հրահանգել, ավանդել, պատգամել:
Պատրանք - 1.Խաբեություն, խաբկանք, ցնորք: 2.Հուսախաբություն, հիասթափություն:
Պատրաստ - 1. Ավարտուն, պատրաստի: 2. Հոժարակամ, պատրաստակամ:
Պատրաստակամ - Պատրաստ, հակամետ, տրամադիր, սիրահոժար, հոժարակամ, բարյացակամ, բարեհաճ:
Պատրաստել - 1. Շինել, հորինել, սարքել, կառուցել, կերտել, կազմել, արտադրել: 2.Նախապատրաստել, կազմակերպել: 3. Հրահանգել, սովորեցնել:
Պատրիարք - Հայրապետ, հովվապետ, եպիսկոպոսապետ, կաթողիկոս (հայկական), միտրոպոլիտ (հունադավան), պապ (կաթոլիկ):
Պատրիկ - Իշխան, մելիք, աղա, պայլ:
Պատրվակ - Պատճառ, առիթ, քող, դիմակ:
Պատրույգ - Լուցան, լուցանելիք:
Պատուհան - Լուսամուտ, լուսանցույց, լուսանցք:
Պատուհաս - 1. Պատիժ, չարիք, փորձանք, աղետ, (փխբ.) կրակ: 2.Գլխացավանք:
Պատուհասել - 1. Վնասել: 2. Սպառնալ: 3. Պատժել: 4. Տանջել:
Պար - Լեռնաշղթա, լեռնագոտի, լեռնապար, լեռնաշար, շարք:
Պարագա - 1. Պայման, վիճակ, հանգամանք, իրադրություն: 2.Առիթ, շարժառիթ:
Պարագիծ - Շրջագիծ, շրջանագիծ, շրջան, բոլորակ:
Պարագլուխ - 1. Ղեկավար, առաջնորդ, գլխավոր, պետ: 2. Խմբապետ:
Պարահանդես - Պարերեկույթ, հանդես, պարատոն:
Պարան - Չվան, ճոպան, թոկ, լար, առասան, կառան, մալուխ (կաբել), քուղ:
Պարանոց - Վիզ, (բրբ.) ճիտ, շլինք:
Պարապ - 1. Անգործ, անբան, անաշխատ, գործազուրկ, անզբաղ: 2. Դատարկ, ունայն, նանիր, ընդունայն, սին: 3. Թափուր (տեղ, պաշտոն):
Պարապել - 1. Զբաղվել, աշխատել, բանել, գործ անել: 2. Սովորել:
Պարապմունք - Գործ, աշխատանք, զբաղմունք:
Պարապուրդ - 1. Արձակուրդ: 2. Կանգուրդ:
Պարարտ - 1. Գեր, չաղ, ճարպոտ, յուղոտ: 2.Արգավանդ, բերրի, արգասավոր:
Պարբերություն - 1. Տողագլուխ, նոր տող, հատած: 2. Տեւողություն: 3. Խոսք:
Պարգեւ - 1. Ընծա, նվեր: 2. Շնորհք, տուրք: 3. Մրցանակ: 4.Շքանշան:
Պարգեւատրել - Պարգեւել, նվիրել, նվիրատրել, բաշխել, ընծայել, շնորհել:
Պարգեւել - Շնորհել, նվիրել, ընծայել, պարգեւատրել, նվիրաբերել, բաշխել:
Պարեգոտ - Պատմուճան, կապա, փարաջա, թիկնոց (զինվորի), շապիկ:
Պարել - 1. Կաքավել, խաղալ, պար գալ, պար բռնել: 2.Ցատկոտել, բռչկոտել, ոստոստել:
Պարեխ - 1.Ժայռ, ապառաժ, առապար: 2.Գահավեժ:
Պարեկ - Պահակ, պահակախումբ, պահակապան:
Պարեն - Ուտեստ, ուտելիք, սնունդ, սննդամթերք, կենսամթերք, նպար, նպարեղեն:

Պարևր -Բերդակալ, բերդապետ, ամրոցապետ:
Պարզ - 1.Մաքուր, զուտ, վճիտ, զուլալ, ջինջ, հստակ, ականակիտ: 2.Պայծառ, անամպ, պարզկա: 3.Անպաճույճ, անզարդ, անսեթևեթ, հասարակ, պարզունակ: 4. Հայտնի, պարզորոշ, մեկին, հեշտ: 5. Միամիտ, բացսիրտ, անկեղծ:
Պարզաբանել - Բացատրել, մեկնաբանել, մեկնել, լուսաբանել, բացահայտել, պարզել:
Պարզամիտ - 1. Միամիտ, դյուրահավատ: 2. Անկեղծ, բացսիրտ: 3. Ծանծաղամիտ:
Պարզապես - Հստակորեն, բացահայտորեն, որոշակիորեն:
Պարզել - 1. Մաքրել, զտել, հստակել, զուլալել: 2.Տարածել, երկարացնել: 3. Փռել, բանալ, ծածանել (դրոշը): 4.Բացատրել, լուսաբանել, մեկնաբանել, մեկնել, պարզաբանել, լուծել:
Պարզերես - Բարձրագլուխ, բացերես, բացճակատ:
Պարզորոշ - Ակնհայտ, ակներև, բացահայտ, որոշակի:
Պարզվել - 1. Հայտնի դառնալ: 2. Պարզել, մաքրվել, պայծառանալ, հստականալ:
Պարզունակ - 1. Պարզ, անզարդ, հասարակ, անպաճույճ: 2. Մակերեսային:
Պարթևահասակ - Բարձրահասակ, հաղթահասակ, հաղթանդամ, պարթև:
Պարիկ - Հավերժահարս, փերի:
Պարիսպ - Պատ, որմ, ցանկապատ, շրջապարիսպ:
Պարծանք - Հպարտություն, փառք, պատիվ, պանծանք:
Պարծենալ - 1. Հպարտանալ: 2. Ճամարտակել, սնապարծել, ինքնագովել:
Պարծենկոտ - Սնապարծ, ինքնագով, մեծախոս, անհամեստ, պոռոտախոս:
Պարկ - Տոպրակ, քսակ, ուսապարկ, մախաղ, պայուսակ, խուրջին:
Պարկեշտ - Համեստ, ամոքխած, առաքինի, ազնիվ, մաքուր, չափավոր, ժուժկալ, զուսպ:
Պարկեշտություն - Համեստություն, ամոթխածություն, պատկառանք, խոնարհություն, հեզություն, առաքինություն, ազնվություն, բարոյականություն:
Պարկուճ - Պատյան, պաճ, պաճուկ (բրբ.):
Պարման - Պատանի, երիտասարդ, ջահել, պարման, պատանյակ:
Պարոն - 1. Տեր, տիար, աղա: 2. Բարոն, իշխան:
Պարպել - 1. Դատարկել, թափել: 2. Սպառել, վերջացնել: 3. Կրակել (արձակել):
Պարս - Մեղվախումբ, մեղվապարս, երամ:
Թշնամու ձեռքը զենք տալ - Որևէ արարքով նպաստել թշնամու գործողությանը:
Թոզը քամուն տալ - Ոչնչացնել, ջախջախել, հողմացրիվ անել, խիստ պատժել:
Թոկը կտրած մոզի - Անկարգապահ, անզուսպ, խելառ:
Թոկը որտեղից բարակ է, այնտեղից թող կտրվի - Փույթ չէ, ինչ ուզում է թող լինի:
Թոկից փախած - 1. Սրիկա, (շատ անգամ բռնված ու դուրս պրծած): 2. Ապերասան, անհշխանական (մարդ):
Թոկ չեմ տա, որ խեղդվի - Նույնիսկ թոկի արժանի չէ, որով խեղդվի:
Թոհ ու բոհ - Քաոս, խառնաշփոթություն:
Թողություն արեք - Ներեցեք, ներողամիտ եղեք:
Թոնիրն ածես՝ շորահոտ չի գա - Չափազանց աղքատ է, տկլոր է, ոչինչ չունի հագին:
Թռչունը թռավ - Որսը մեր ձեռքից խուսափեց, որսը փախցրինք անզգուշաբար:
Թռչունի թևով - Շատ արագ:
Թռչունի խելք - Ծանծաղամիտ, պակասամիտ:
Թռչունի կաթ - Հազվագյուտ, չճարվող բան:
Թռչունի պես ապրել - Ազատ, անհոգ կյանք վարել:
Թռչուն խաղացնել (թռցնել) - Պարապ-սարապ թրև գալ:
Թռչունների արքա - Արծիվ, հավքերի արքա:
Թրախորով անել - Սրախողխող անել, սրով սպանել:
Թրև գալ - Աննպատակ թափառել:
Թրերը խաչաձևել - Մենամարտել, ընդհարվել:
Թրի տակ - Մեկի իշխանության տակ, ներքո:
Թրի տակով անցնել - Մեկի իշխանությանը ենթարկվել, հնազանդվել:
Թրջված հավ - Խեղճ ու կրակ, խեղճ ու անճար մարդ:
Թութակի պես կրկնել - Չհասկանալով կրկնել, մեխանիկորեն կրկնել:
Թուխս նստել - 1. Տանից երկար ժամանակ դուրս չգալ: 2. Մի տեղ երկար ժամանակ նստել:
Թուղթ բանալ (բաց անել) - Գուշակել:
Թուղթ կրծող - 1. Բյուրոկրատ, չինովնիկ: 2. Գրող, գրական աշխատող:
Թուղթ մրոտող - Անտաղանդ, անշնորհք բաներ գրող:
Թուղթ չեմ, որ թրջվեմ - Տոկուն, դիմացկուն եմ, ինձ վնաս չի լինի:
Թույլ բերան - Գաղտնիք չպահող:
Թույլ կողմը - Որևէ մեկի թերությունը, բնավորության անսովոր, տարօրինակ գիծը:

Թույնը թափել - Մեկի վրա զայրույթը, բարկությունը թափել, կատաղել:
Թունավոր լեզու - Չարախոս մարդ, կծող խայթող, չար լեզու, օձի լեզու:
Թունդ խոսք - Կոպիտ խոսք, հայհոյանք, նախատինք:
Թուրը կտրել - Իշխանություն ունենալ:
Թուրը պատյանը դնել - Համաձայնության գալ, հաշտվել:
Թուր ու թվանք դառնալ - Իրար հետ սաստիկ թշնամանալ:
Թուքը բերանում չորանալ - Սաստիկ վախենալ, սարսափահար լինել:
Թուքը կուլ տալ - Սաստիկ ծարավել, բերանը ցամաքել, չորանալ:
Թուքը կուլ տալ - Ուտելու մեծ ցանկություն ունենալ, ցանկալի, բայց իր համար անմատչելի ուտելիքին նայել:
Թուք ու մուր - Անպատվություն, անարգանք, պարսավանք:
Թքածը լիզել - Ասածից հետ կանգնել, նախկին խոսքից հրաժարվել, իր հրամանը, կարգադրությունը փոխել:
Թքած ունենալ - Բանի տեղ չդնել, հաշվի չառնել:
Թքել մեկի վրա - Մեկից վերջնականապես հրաժարվել, խաչ դնել մեկի վրա:
Թքես՝ գետնին չի ընկնի - Սաստիկ ցուրտ է:
Թքում ես երեսին, ասում է՝ անձրև է գալիս - Ամոթ՝ պատկառանք չունի, անամոթի մեկն է:
Թքով կպցրած - Ոչ ամուր, խախուտ, մի կերպ իրար կպցրած:
Թքել մեկի (մի բանի) վրա - Արհամարհել, բանի տեղ չդնել:

Ժ

Ժամանակ գտնել - Հարմար առիթ գտնել, հարմար պահ ընտրել:
Ժամանակը իր գործը կանի - Ժամանակի ընթացքում անհրաժեշտ փոփոխությունները կկատարվեն:
Ժամանակը հղի է - Նորանոր բաներ են սպասվում:
Ժամանակը ոսկի է - Ժամանակը չպետք է անտեղի վատնել, ժամանակը շահավետ պետք է օգտագործել:
Ժամանակը չի սպասում - Անհրաժեշտ է շուտափույթ գործել, չպետք է հապաղել, ուշացնել:
Ժամանակը վերքերը կբուժի - Ժամա-

Թույնը թափել - Մեկի վրա զայրույթը, բարկությունը թափել, կատաղել:
Թունավոր լեզու - Չարախոս մարդ, կծող, խայթող, չար լեզու, օձի լեզու:
Թունդ խոսք - Կծու խոսք, հայհոյանք, նախատինք:
Թուրը կտրել - Իշխանություն ունենալ:
Թուրը պատյանը դնել - Համաձայնության գալ, հաշտվել:
Թուր ու թվանք դառնալ - Իրար հետ սաստիկ թշնամանալ:
Թուքը բերանում չորանալ - Սաստիկ վախենալ, սարսափահար լինել:
Թուքը կայչել - Սաստիկ ծարավել, բերանը ցամաքել, չորանալ:
Թուքը կուլ տալ - Ուտելու մեծ ցանկություն ունենալ, ցանկալի, բայց իր համար անմատչելի ուտելիքին նայել:
Թուք ու մուր - Անպատվություն, անարգանք, պարսավանք:
Թքածը լիզել - Ասածից հետ կանգնել, նախկին խոսքից հրաժարվել, իր հրամանը, կարգադրությունը փոխել:
Թքած ունենալ - Բանի տեղ չդնել, հաշվի չառնել:
Թքել մեկի վրա - Մեկից վերջնականապես հրաժարվել, խաչ դնել մեկի վրա:
Թքես՝ գետնին չի ընկնի - Սաստիկ ցուրտ է:
Թքում ես երեսին, ասում է՝ անձրև է գալիս - Ամոթ պատկառանք չունի, անամոթի մեկն է:
Թքով կպցրած - Ոչ ամուր, խախուտ, մի կերպ իրար կպցրած:
Թքել մեկի (մի բանի) վրա - Արհամարհել, բանի տեղ չդնել:

Ժ

Ժամանակ գտնել - Հարմար առիթ գտնել, հարմար պահ ընտրել:
Ժամանակը իր գործը կանի - Ժամանակի ընթացքում անհրաժեշտ փոփոխությունները կկատարվեն:
Ժամանակը հղի է - Նորանոր բաներ են սպասվում:
Ժամանակը ոսկի է - Ժամանակը չպետք է անտեղի վատնել, ժամանակը շահավետ պետք է օգտագործել:
Ժամանակը չի սպասում - Անհրաժեշտ է շուտափույթ գործել, չպետք է հապաղել, ուշացնել:
Ժամանակը վերքերը կբուժի - Ժամանակի ընթացքում վիշտն ամոքվում է:
Ժամանակի հետ քայլել - Տվյալ ժամանակի իրադրության պայմաններին արձագանքել կամ հարմարվել:
Ժամանակ կորցնել - Ուշանալ, դանդաղել, ժամանակն ապարդյուն վատնել:
Ժամանակ շահել - Որևէ երկրորդական բան առաջ բերելով ժամանակը ձգձգել հետագայում օգտվելու համար:
Ժամանակ սպանել - Իզուր ժամանակ վատնել, ժամանակը ապարդյուն անցկացնել:
Ժամավաճառ լինել - Ժամանակը չնչին բաների վրա ապարդյուն, անտեղի վատնել:
Ժամերը համրել - Մի ցանկալի բանի անհամբեր սպասել:
Ժամը ժամից անցնել - Ուշանալ, շատ ժամանակ անցնել:
Ժամից ես եմ գալիս, ողորմի Աստված դո՞ւ ես ասում - Ասված է մեկի մասին, որը առանց տեղյակ լինելու գործի էությանը, վիճում է այնպիսի բաների մասին, որին դիմացինը շատ լավ տեղյակ է:
Ժանիքը ցույց տալ - 1. Հոշոտելու պատրաստ լինել, խիստ դեմք, վերաբերմունք ցույց տալ: 2. Ատամները ցույց տալ:
Ժողովրդի ձայն - Հասարակական կարծիք, հանրության ցանկություն կարծիք:

Ի

Ի դերև ելնել - Չարդարանալ, չիրականանալ:
Իգն ու թոզը կորչել - Անհետ կորչել, այլևս չերևալ:
Իծահազ տալ - Կեղծ հազալ:
Ի հայտ բերել - Ասպարեզ հանել:
Ի հեճուկս նրա - Նրա կամքի, ցանկության հակառակ, նրան չարացնելու համար:
Իմն ինձ հասավ - Համբերությունս հատավ:
Ի մի բերել - Ամբողջացնել, ամփոփել, հավաքել:
Իմ ինչ բանն է - Իմ գործը չէ, ինձ չի վերաբերում:
Իմ խելքից է - Ես եմ մեղավոր, պատճառը ես եմ:
Իմ կարճ խելքով - Իմ համեստ կարծիքով, ես այդպես եմ կարծում:

Իմ հաշվին - Իմ ծախսով:
Ինն էլ այստեղ էր հատել - Նախասահմանությամբ ես էլ այս վախճանը պետք է ունենայի:
Իմ օրում - 1. Իմ կյանքի ընթացքում: 2. Ոչ մի դեպքում, երբեք:
Ինձ ինչ - Ինձ չի վերաբերում, իմ գործը չէ:
Ինձ հարցրու - Ամենից լավ ես գիտեմ:
Ինձ նայիր, քեզ խղճա - Առանց փորձված մարդու խորհրդի կամ զգուշացման չանել մի բան, ինչ ինքն արել և տուժել է:
Իններորդ ալիք - 1. Ծովի փոթորկի ժամանակ ամենաբարձր և ամենավտանգավոր ալիքը: 2. Որևէ բանի ահավոր վտանգի կամ ամենաբարձր վերելքի խարհրդանիշ:
Ինչ ասել կուզի - Անտարակույս, խոսք չկա, իհարկե, հասկանալի է որ:
Ինչ ասեմ - Այլևս ասելիք չմնաց (գործածվում է, երբ մեղադրում են մեկին, որը չնայած խրատներին . շարունակում է իր սխալ ընթացքը):
Ինչ ասես արժե - Ամեն ինչ արժե, հիանալի է, սքանչելի է, թանկարժեք է:
Ինչ արած - Ոչինչ, վնաս չունի, ստիպված, հարկադրված, ճարահատյալ:
Ինչ արի-չարի - Որքան չարչարվեցի, համոզեցի:
Ինչ բերանը գա - Առանց մտածելու կամ ստուգելու, վայրիվերո, ափեղցփեղ:
Ինչ գնով լինի - Ամեն կերպ, ամեն տեսակ զոհողության գնով:
Ի՞նչ ես կորցրել, ինչի՞ մահ գալիս - Ամենամեծ բանը, ամենակարևորը մոռացել՝ երկրորդական բաների մասին ես մտածում, միևնույն է ոչինչ դուրս չի գա:
Ի՞նչ երեսով - Ամոթ է, ամաչում եմ, կամաչեմ:
Ի՞նչ եմ քաշել - Շատ եմ տանջվել, տառապել:
Ի՞նչ է մնում - Այլևս ոչինչ չի մնում:
Ի՞նչ է նա իրենից ներկայացնում - Նա ո՞վ է, ի՞նչ է, ինչացո՞ւ է, նա իրենից ոչինչ չի ներկայացնում:
Ինչի՞ է նման - 1. Դժգոհություն, անբավականություն մեկի վատ, անմիտ արարքի վերաբերյալ: 2. Գեղեցիկ չէ, տգեղ, անճոռնի է:
Ինչ(ը) ինչոց է - Իրերի վիճակը, իրադրությունը ինչպես է, բանը ինչումն է:
Ինչի՞ տեղ դնել - Մեկին ցածր համարել, թերագնահատել, բանի տեղ չդնել:
Ի՞նչ խաբար է - Այդ ի՞նչ բան է, ինչո՞ւ:
Ինչ խոսել կուզի - Խոսելն ավելորդ է, առանց խոսելու էլ ամեն ինչ հասկանալի է:
Ինչ խոսք - Անտարակույս, անպայման, իհարկե:
Ի՞նչ հողը տամ գլխիս - Հուսահատության արտահայտություն՝ ի՞նչ անեմ, ելք չկա, ի՞նչ կարող եմ անել, չեմ իմանում ինչ անել:
Ի՞նչ միտք ունի - Աննպատակահարմար է:
Ինչ ներելի է Զևսին, ներելի չէ մահկանացուներին - Այն, ինչ ներելի է մեծերին (հզորներին), այդ նույնը չի կարելի ներել սովորական մարդկանց:
Ի՞նչն է պակաս - Ոչ մի պակասություն չունի, ամեն ինչ լավ է՝ տեղին է:
Ի՞նչ պտուղ ես - Դու բոլորովին էլ միամիտ չես, քո շահը լավ ես հասկանում:
Ինչպես երևում է - Հավանաբար, կարծես թե, ըստ երևույթին:
Ինչպես ձուկը ջրում - Իրեն ազատ, անկաշկանդ, լավ զգալ որևէ տեղ:
Ինչպես որոտը պայծառ երկնքում - Անսպասելիորեն, հանկարծակի:
Ինչպես չէ - Այո, իհարկե, հարկավ:
Ի՞նչ սրտով - Ի՞նչ տրամադրությամբ, անտրամադիր:
Ի՞նչ ցավս է - Իմ պետքը, հոգը չէ, այդ մասին ես չեմ մտահոգվում:
Ինչքան չլինի - Այսպես թե այնպես, առնվազն, գոնե, որքան չլինի:
Ինչքան ուզես - Շատ, անթիվ, անհաշիվ:
Ինքն իրեն թանկ ծախել - Ինքն իրեն բարձր դասել, բոլորից բարձր համարել:
Ինքն իրեն չճանաչել - Զայրույթից ինքն իրեն կորցնել, խիստ բարկացած լինել:
Ինքն իրեն ուտել - 1. Զայրանալ, բորբոքվել: 2.Անհանգստանալ:
Ինքն իր հետ կռիվ տալ - Երկմտանքի մեջ լինել, երկու հակառակ մտքերի մեջ տատանվել:
Ինքն իր ձեռքով կրակն ընկնել - Իր տարօրինակ բնավորության պատճառով ինքն էլ տուժել, իր անելիքը չիմանալ:
Ինքն իր մեջ ամփոփվել - Շրջապատից, հասարակությունից անջատվել, մեկուսանալ:
Ինքն իր ոտով - Իր հոժար կամքով, հոժարակամ:
Ինքս ինձ հարցրի - Սկսեցի ինքս ինձ մտածել, կշռադատել:

Իշխանություն բանեցնել - Իշխել, ղեկավարել:
Իշխող բարձունքներ - Տիրապետող դիրք:
Իշտահից քցախ - Կտրուկ մերժում, դառն անհաջողության հանդիպես, զուր է ակնկալիքդ:
Իշու խելք - Հիմարություն, անխելքություն:
Ի սեր Աստծո - Թախանձանք եթե Աստված սիրում ես, հանուն Աստծո:
Իսկ և իսկ - Ճիշտ, ուղիղ, նույնը, բոլորովին նման:
Իսկը մայրն է - Ամբողջովին մորն է նման:
Ի վերին Երուսաղեմ գնալ - Մեռնել, մահանալ:
Ի վիճակի լինել - Կարողանալ, հնարավորություն ունենալ:
Իր ականջները տեսնել - Ասվում է մերժումը, մի բանի անհնարինությունը խիստ արտահայտելու համար, որևէ բան բոլորովին, երբեք չստանալու, որևէ բանի երբեք չտիրանալու համար:
Իր աղունն աղալ - Միայն իր գործն առաջ տանել:
Իրանը իրան հասնել - Շատ նեղություն կրել, հոգին դուրս գալ, չարչարվել:
Իրանից ասել - Հորինել, հեղինակել, ստեղծել:
Իր աչքի գերանը մոռանալ՝ ուրիշի աչքի շյուղը տեսնել - Իր մեծ պակասությունը անտեսել, ուրիշի չնչին թերությունները մատնացույց անել:
Իր ասածի - Համառ, կամակոր:
Իր աչքից ընկնել - Ինքն իրենից զզվել, ինքն իր առաջ նվաստանալ:
Իրավունք բանեցնել - Իշխել:
Իրավունքը թրի ծայրին լինել - Ուժով, զենքի օգնությամբ ցանկացածը կատարել:
Իրար անցնել - 1. Իրար խառնվել, ամբոխվել: 2. Շփոթվել, շշկռվել, գլուխը կորցնել:
Իրար առնել - Վիճել, կռվել, իրար վիրավորել:
Իրար աչք մտնել - Իրար հավանել, դուր գալ:
Իրար ատամի տալ - Իրար փորձել:
Իրար բերան թքել - Խոսքերը մեկ անել, միաձայնաբար հանդես գալ, իրար պաշտպանել:
Իրար բերանից պատառ խլել - Անձնական շահի համար իրար դեմ պայքար մղել, ոչ մի բանի առաջ կանգ չառնել:

Իշխանություն բանեցնել - Իշխել, ղեկավարել:
Իշխող բարձունքներ - Տիրապետող դիրք:
Իշտահիդ բացախ - Կտրուկ մերժման, դառն անհաջողության հանդիպելս, զուր է ակնկալիքդ:
Իշու խելք - Հիմարություն, անխելքություն:
Ի սեր Աստծո - Թախանձանք՝ եթե Աստված սիրում ես, հանուն Աստծո:
Իսկ և իսկ - Ճիշտ, ուղիղ, նույնը, բոլորովին նման:
Իսկը մայրն է - Ամբողջովին մորն է նման:
Ի վերին Երուսաղեմ գնալ - Մեռնել, մահանալ:
Ի վիճակի լինել - Կարողանալ, հնարավորություն ունենալ:
Իր ականջները տեսնել - Ասվում է մերժումը, մի բանի անհնարինությունը խիստ արտահայտելու համար, որևէ բան բոլորովին, երբեք չստանալու, որևէ բանի երբեք չտիրանալու համար:
Իր աղունն աղալ - Միայն իր գործն առաջ տանել:
Իրանը իրան հասնել - Շատ նեղություն կրել, հոգին դուրս գալ, չարչարվել:
Իրանից ասել - Հորինել, հեղինակել, ստեղծել:
Իր աչքի գերանը մոռանալ՝ ուրիշի աչքի շյուղը տեսնել - Իր մեծ պակասությունը անտեսել, ուրիշի չնչին թերությունները մատնացույց անել:
Իր ասածի - Համառ, կամակոր:
Իր աչքից ընկնել - Ինքն իրենից զզվել, ինքն իր առաջ նվաստանալ:
Իրավունք բանեցնել - Իշխել:
Իրավունքը թրի ծայրին լինել - Ուժով, զենքի օգնությամբ ցանկացածը կատարել:
Իրար անցնել - 1. Իրար խառնվել, ամբոխվել: 2. Շփոթվել, շշկռվել, գլուխը կորցնել:
Իրար առնել - Վիճել, կռվել, իրար վիրավորել:
Իրար աչք մտնել - Իրար հավանել, դուր գալ:
Իրար ատամի տալ - Իրար փորձել:
Իրար բերան թքել - Խոսքերը մեկ անել, միասնաբար հանդես գալ, իրար պաշտպանել:
Իրար բերանից պատառ խլել - Անձնական շահի համար իրար դեմ պայքար մղել, ոչ մի բանի առաջ կանգ չառնել:
Իրար բկից բռնել - Իրար հետ կռվել, վիճել:
Իրար գլխի լցվել՝ հավաքվել - Մի տեղ հավաքվել, անկանոն, անկազմակերպ մի տեղ խմբվել:
Իրար գլխով տալ - 1. Իրար խփել, ջարդել, ջարդուփշուր անել: 2. Տակն ու վրա անել, իրար խառնել, ամեն տեղ որոնել:
Իրար գցել - 1. Մեկը մյուսի վրա գցել: 2. Հազիվ, մի կերպ կարողանալ ապրել: 3.Բերանից կտրելով՝ հավաքել, խնայել: 4.Կռվեցնել, դավել:
Իրար դիպչել - Իրար հետ ընդհարվել, խոսքերով իրար վիրավորել, կռվել:
Իրար եղունգ ու միս լինել - Իրար հետ միաբան, համերաշխ լինել, շատ մտերիմ, անբաժան լինել:
Իրար երես նայել - 1.Ապշել, որևէ բանից գլուխ չհանել: 2.Իրար օգնել:
Իրար երես կրծել - Իրար նախատել, հանդիմանել, անպատվել:
Իրար լեզու հասկանալ - Միաբանել, մտերմանալ, իրար հասկանալ:
Իրար խառնվել - Գլուխը կորցնել, անելիքը չիմանալ, շփոթվել:
Իրար խոսք տալ - Ամուսնանալու կամ որևէ այլ գործի համար ուխտ կապել, երդվել:
Իրար ծանր խոսքեր ասել - Իրար վիրավորել:
Իրար կոկորդ կրծել - Իրար հետ անհաշտ լինել՝ կռվել, գժտվել:
Իրար կողմ տաշել - 1. Միմյանց թերությունները մեջ բերելով՝ իրար անպատվել: 2.Յուրաքանչյուրը իր շահը հաշվի առնել:
Իրար կողքի դնել - Համեմատել, բաղդատել:
Իրար կրունկ տրորել - Իրար վատաբանել, կրնկակոխ հետևել:
Իրար հետ շուն ու գայլ լինել - Անհաշտ թշնամիներ լինել, թշնամական հարաբերության մեջ լինել:
Իրար ձեռք բռնել - Իրար օգնել, օժանդակել:
Իրար ձեռք տալ - Հաշտվել, համաձայնել:
Իրար միս կրծել - Իրար հետ գժտվել, թշնամանալ, անհաշտ ապրել, իրար սաստիկ ատել:
Իր արշինով չափել - Որևէ մեկի կամ բանի մասին դատել միակողմանիորեն, իր անձնական տեսանկյունով:

Իրար չտանել - Իրար չհանդուրժել, միմյանց ատել:
Իրար ջան ասել, ջան լսել - Սիրալիր, համերաշխ լինել միմյանց նկատմամբ:
Իրար սրտից ջուր խմել - Իրար լավ հասկանալ, սրտակից լինել, իրար հավանել:
Իրար վրա - Մեկը մյուսի հետևից, առանց ընդհատելու:
Իրար տալ - 1. Իրար ծեծել, ծեծկվել: 2. Մի բան տեղից շարժել:
Իրար տակ փորել - Իրար բամբասելով վարկաբեկել, դավադրություն, որոգայթ լարել, իրար նկատմամբ անհաշտ լինել:
Իրար տանել - Միմյանց հանդուրժել, իրար հետ հաշտ լինել, չգժտվել:
Իրար օձիք բաց չթողնել - Իրար կպչել, իրար հետ կռվելու վիճակի մեջ լինել:
Իր բախտին բացի տալ - Իր անխոհեմ արարքներով իրեն վնասել, բախտը, հաջողությունը իրենից վանել:
Իր բարձրության վրա լինել - Իր դիրքին ու կոչմանը համապատասխանել:
Իր բերանով խնդրել - Անձամբ խնդրել:
Իր բուռը հավաքել - Միանձնորեն իշխել, բոլորին ենթարկել:
Իր բռում պահել - Մեկին (կամ շատերին) սաստիկ հսկողության մեջ պահել, թույլ չտալ ազատ շունչ քաշելու:
Իր գլխից դուրս բերել - Հորինել, մոգոնել:
Իր գլուխը լալ - Ծանր վիճակը ողբալ:
Իր գործը գիտենալ - Իր անելիքը գիտենալ, իր գործում հմուտ լինել:
Իր դարն անցնել - Արդեն հնացած լինել, նոր ժամանակներում իր գոյությունը չարդարացնել:
Իր դարն ապրել - Հնացած:
Իր եղի (յուղի) մեջ տապակվել - 1. Իր սեփական չնչին միջոցներով ապրել, գոյությունը պահպանել: 2. Իր հոգսերով, վշտերով տառապել, չարչարվել:
Իրեն գտնել - 1. Դժվար կացությունից դուրս գալ, իրեն չկորցնել, չշփոթվել, կողմնորոշվել: 2.Իրեն դրսևորել:
Իրեն գցել - Արագությամբ ներս մտնել:
Իրեն երևակայել - Գոռոզանալ, մեծամտել, իր մասին մեծ կարծիք ունենալ:
Իրեն թանկացնել - Իր արժեքը գիտենալով իրեն ծանր պահել, ծզծզել, չեմ ու չում անել, սեթևեթել:
Իրեն թափ տալ - Ուժերը լարել, կտրուկ կերպով շրջադարձ կատարել:
Իրենից դուրս գալ - Համբերությունից դուրս գալ, գայրանալ, ինքն իրեն կորցնել:
Իրեն կարգի բերել - Հարդարվել, մազերը, հագուստը ուղղել:
Իրեն կորցնել - 1. Իր գլուխը կորցնել, գայրանալ: 2.Անելիքը չիմանալ, շփոթվել:
Իրեն կտրատել - 1. Խիստ հուզվել, տագնապել, լաց ու կոծ անել: 2. Ջայրանալ:
Իրեն կրակը գցել - 1. Շատ աշխատել, տանջվել, ջանալ, ճգնել: 2. Փորձանքի, պատուհասի մեջ ընկնել:
Իրեն հաշիվ տալ - Իր կատարած կամ կատարելիք քայլերը կշռադատել, գնահատել:
Իրեն հավաքել - 1.Ուշքի գալ, զգաստանալ, խելքը գլուխը հավաքել: 2. Զուսպ, չափավոր լինել:
Իրեն հեռու պահել - Որևէ գործից մի կողմ քաշվել, որևէ բանի չմասնակցել:
Իրեն մեծ բանի տեղ դնել - Մեծամտել, գոռոզանալ:
Իրեն պահել - 1. Վարվել գիտենալ: 2. Զսպել իրեն:
Իրեն սպառել - 1. Հնանալ, ծերանալ, կարողություններից զրկվել, անպետքանալ: 2. Այլևս արդյունք տալ չկարողանալ:
Իրենով անել - Դեպի իրեն քաշել, սեփականել, յուրացնել, տեր դառնալ մի բանի:
Իրեն ցույց տալ - Ցուցամոլ լինել:
Իրեն ուտել - 1. Կատաղել: 2. Տագնապել, իրեն նեղել, տանջել:
Իրեն փշերի վրա զգալ - Շատ անհանգիստ լինել, անհարմար տեղում, վիճակում լինելու պատճառով կաշկանդված լինել:
Իրերն իրենց անունով կոչել - Ճշմարտությունն ասել, ուղիղ ասել առանց մեղմ բառեր կամ արտահայտություններ որոնելու:
Իրերի բերումով - Հանգամանքների թելադրանքով:
Իր զուռնան փչել - Իր ասածը պնդել, իր ասածն անել, ուրիշի ասածի վրա ուշադրություն չդարձնել:
Իր էշը շինել - Մեկին իրեն ենթարկել, իր կամակատարը դարձնել:
Իր էշի ընթացքը շեղել- Իր մտադրությունը փոխել:

Իր էշը (ձին) քշել - 1. Իր ասածը առաջ տանել, ուրիշին չլսել. 2. Համառել, կամակորել:
Իր թելը մանել - Իր գործի մասին մտածել հոգ տանել:
Իր լուման մտցնել - Իր ուժերի ներածին չափով օգտակար մասնակցություն ունենալ որևէ գործում:
Իր խաչը կրել - Տանջվել, տառապել, իր հոգսը, վիշտը տանել:
Իր խոսքն առաջ տանել - Իր ասածն անել, իր ասածը անցկացնել, համառել (իր էշը քշել):
Իր խոսքը պահել - Իր խոսքը, խոստումը կատարել:
Իր խոսքին մնալ - Իր կարծիքին մնալ, համոզմունքը չփոխել:
Իր խոսքի տեր - Իր ասած խոսքը, իր խոստումը չդրժող, կատարող մարդ:
Իր խոսքն ասել - Որևէ բանում իրեն ցույց տալ իր լուման մտցնել կարևոր դեր խաղալ:
Իր կաշին ազատել - Վտանգավոր, անախորժ, աննպաստ վիճակից խույս տալ:
Իր կաշվի վրա զգալ - Սեփական փորձով համոզվել, իր վրա զգալ:
Իր կաշվից վախենալ - Զգուշանալ, մորթապաշտ լինել, անձը վտանգի չենթարկել:
Իր կնիքը դնել - Իր ազդեցությունը , հետքը թողնել:
Իր կշիռով մեկ ոսկի արժե - Շատ խելացի է, ազնիվ մարդ է:
Իր կողմը գրավել - Իրեն համախոհ դարձնել:
Իր համար կանոն դարձնել - Որպես օրենք ընդունել, ղեկավարվել դրանով:
Իր հացին քացի տալ - Չհասկանալով վնաս բերել իր շահին:
Իր ձեռքը առնել - Ամեն ինչ ինքը տնօրինել, միանձնաբար իրեն ենթարկել:
Իր ճանապարհով գնալ - Ինքնուրույնաբար գործել, սեփական ուղին հարթել:
Իր միսը կրծոտել - Ինքն իր մեջ բարկանալ, իր բարկությունը դժվարությամբ զսպել:
Իր շքից վախենալ - Իր ստվերից վախենալ, շատ վախկոտ լինել:
Իր վրա շատ բան վերցնել - Իրեն ավելին թույլ տալ, քան պետք է, իր իրավունքները գերագնահատել:

Իր էշը (ձին) քշել - 1. Իր ասածը առաջ տանել, ուրիշին չլսել: 2. Համառել, կամակորել:
Իր բելը ձայնել - Իր գործի ծառին ծառայել:
Իր լուծան ծածկել - Իր ուժերի չափով ապրել:
Իր խաչն կրել - Տանջվել, տառապել, իր բաժին վիշտը տանել:
Իր խոսքի առաջ տանել - Իր ասածը անցկացնել, հաստատել (իր էշը քշել):
Իր խոսքը պահել - Իր խոսքը, խոստումը կատարել:
Իր խոսքից մնալ - Իր կարծիքին մնալ, համոզմունքը չփոխել:
Իր խոսքի տեր - Իր ասած խոսքը, իր խոստումը չդրժող, կատարող մարդ:
Իր խոսքն ասել - Որևէ բանում իրեն ցույց տալ, իր լուծան ծածկել, կարևոր դեր խաղալ:
Իր կաշին ազատել - Վտանգավոր, անախորժ, աննպաստ վիճակից խույս տալ:
Իր կաշվի վրա զգալ - Սեփական փորձով համոզվել, իր վրա զգալ:
Իր կաշվից փախչել - Ցցոշանցնել, ծորթառաջ լինել, անձը փոխեցի չենթարկել:
Իր կնիքը դնել - Իր ազդեցությունը, հետքը թողնել:
Իր կշիռով մեկ ոսկի արժե - Շատ խելացի է, ազնիվ մարդ է:
Իր կողմը գրավել - Իրեն համախոհ դարձնել:
Իր համար կանոն դարձնել - Որպես օրենք ընդունել, ղեկավարվել դրանով:
Իր հացին քացի տալ - Չհասկանալով վնաս բերել իր շահին:
Իր ծեռքը առնել - Ամեն ինչ ինքը տնօրինել, միանձնաբար իրեն ենթարկել:
Իր ճանապարհով գնալ - Ինքնուրույնաբար գործել, սեփական ուղին հարթել:
Իր միտքը կրծոտել - Ինքն իր մեջ բարկանալ, իր բարկությունը դժվարությամբ զսպել:
Իր շքից վախենալ - Իր ստվերից վախենալ, շատ վախկոտ լինել:
Իր վրա շատ բան վերցնել - Իրեն ավելին թույլ տալ, բան պետք է, իր իրավունքները գերազանցել:

Իր վրա վերցնել - Յանձն առնել, պատասխանատու լինել:
Իր տեղը ճանաչել - Իր դիրքին համապատասխան իրեն պահել, վարքից հանձնառ լինել:
Իր տեղը նստեցնել - 1. Խոսքին արժանի հակահարված տալ: 2. Անթույլատրելի իր սեփական արժանիքները ցույց տալ:
Իր ցավով խորովվել - Իր միշտ մտածել և իր ջրի հետ լինել:
Իր ուսերի վրա կրել - Որևէ բեռ բաշել:
Իր քթից դենը չտեսնել - Խիստ սահմանափակ լինել, ցնցող ունենալ:
Իր օրում - Երբեք, ոչ մի ժամանակ:
Ի ցույց դնել - 1. Դնել մի երևացող տեղ հատուկ ցույց տալու համար: 2. Վերաշար կողմից ծեծին տուժի ենթարկել: 3. Ցույց տալ:

Լ

Լակոնական պատասխան - Շատ կարճ պատասխան:
Լայն սիրտ ունենալ - Յամբերատար, ներողամիտ, սրտաբաց լինել:
Լայն օր քաշել - Յանգիստ, բարեկեցիկ կյանք վարել:
Լաչակ կապել - Արիամարհական, արտահայտություն տղամարդուն ուղղված. կին դառնալ, կնաբարո լինել:
Լաչակ չունենալ - Անամոթ լինել (կանանց մասին):
Լավ հոտ չգալ - Մեկից վատ բան սպասել, կասկածելի, վտանգավոր երևալ:
Լավ պահել (իրեն) - Կարգապահ, բարոյական կյանք վարել, ողջախոհ լինել:
Լավության տակից դուրս գալ - Երախտահատույց լինել:
Լավություն արա, ջուրը գցիր - Արած լավությունը չի մոռացվի, չի կորչի, երբևէ կփոխհատուցվի:
Լավությունը երեսով(ը) տալ - Կատարած լավությունը միշտ հիշեցնել:
Լավությունը չանցնել - Երախտամոռ լինել, երախտիքը չգնահատել:
Լաց ու կոծ - Սգալ, ողբալ:
Լափին տալ - Ալեկոծվել, փետվել, ալիք տալ:
Լեզվակոխ անել - Լեզվով մեկին հաղթել, խոսակցին խոսելու, պատասխանելու

ինքնավստահություն չունալ:
Լեզվակռիվ տալ - Վիճել, վիճաբանել, մեկի հետ խոսքով բռնկվել:
Լեզվատեղ լինել - Բամբասանքի առարկա դառնալ:
Լեզվի ծայրը գալ - Պատրաստվել արտասանելու, ցանկանալ ասել:
Լեզվի ծայրին լինել - Մի մոռացված անուն կամ բառ այնքան քույլ հիշել, որ չկարողանալ անմիջապես ասել, արտահայտել:
Լեզվի կապերն արձակել - Ազատ, անկաշկանդ, համարձակ խոսել:
Լեզվի կապերը քաշել - Խոսքը չափավորել, սանձել, զսպել:
Լեզվին ապավինել - Հույսը դնել լեզվի վրա, աշխատել ճարտարախոսությամբ հասնել կամ ազդել:
Լեզվին կապ դնել - Խոսելն արգելել, չթողնել խոսել:
Լեզվին տալ - Անտեղի խոսել, շաղակրատել, զրախոսել:
Լեզվին փակ դնել - 1. Լռել, չխոսել: 2. Լռեցնել:
Լեզվին զոռ (ուժ) տալ - Շատախոսել:
Լեզվի վրա փուշ դուրս գալ - Լռել, չխոսել:
Լեզվի տակ բան կա - Ասելու մի բան ունենալ, բայց չասել, ասելիքը չարտահայտել:
Լեզվի տակ ընկնել - Բամբասանքի, ասեկոսեի առարկա դառնալ:
Լեզվի տակ (օձի) թույն լինել - Չար լեզու ունենալ, կծծավոր լինել:
Լեզվի տակից դուրս գալ - Ազատվել բամբասանքից, խուսափել մեղադրանքից:
Լեզվի տակ մնալ - Չկարողանալ պատասխանել:
Լեզվի տակ ոսկոր չկա - Ով ինչ ցանկանում է, անարգելք և առանց հաշվի տալու խոսում է, ինչ ուզի, կարող է ասել:
Լեզվիցդ իր վարձ չեմ ուզում - Համեստություն ցուցանող, շատ դանդաղ խոսող մարդկանց, հատկապես, երբ որևէ բան են ուզում իմանալ:
Լեզվից խոսք թռցնել - Ակամա որևէ գաղտնիք ասել:
Լեզվի փակը բանալ - Երկարատև լռելուց հետո սրտում կուտակվածը ասել:
Լեզվով խայթել - Վիրավորանքի խոսքեր ասել, վիրավորել, ծաղրել:

Լեզվով ծնծղուկ բռնել - Շատ տտախոս լինել:
Լեզու առնել (կամ ելնել) - 1. Խոսել սկսել, համարձակվել խոսել: 2. Խոսել կարողանալ: 3. Շնչավորել, կենդանանալ: 4. Երես առնել:
Լեզու գտնել - Իրար հետ համերաշխ լինել, իրար հասկանալ, համաձայնել:
Լեզու դարձնել - Պատասխանել, խոսքի տակ չմնալ:
Լեզու դնել բերանը - Մեկին երես տալ կամ առիթ տալ լկտիաբար խոսելու, պատասխանելու:
Լեզու թացացնել (թրջել) - Մեկի հետ դժկամությամբ կամ զուր տեղը խոսել:
Լեզու թափել - Շատ խոսել, շաղակրատել, աշխատել մեկին համոզել:
Լեզուն ատամների տակ - Լուռ, անխոս, անձայն:
Լեզուն ատամների տակ պահել - Գաղտնապահ լինել, ավելորդ բաներ չասել:
Լեզուն արմատահան անել - Մեկին լռեցնել, խոսելու կարողությունից զրկել:
Լեզուն բացվել - Երկար լռելուց հետո սկսել խոսել:
Լեզուն բերանում չորանալ - Չկարողանալ խոսել, պապանձվել, լալկել:
Լեզուն բռնել - Մի բան ասելու կամ խնդրելու համար համարձակություն ստանալ:
Լեզուն բռնվել - Չկարողանալ խոսել պատասխանել, պապանձվել:
Լեզուն դառնալ - Խոսել, ասել կարողանալ:
Լեզուն երկար - 1. Ըմբոստ համարձակ խոսող: 2. Խոսելու չափն ու սահմանը չիմացող:
Լեզուն զորել - Համարձակվել, ի վիճակի լինել ասելու:
Լեզուն իրեն պահել - Ավել-պակաս չխոսել, զգույշ լինել:
Լեզուն ծակը կոխել - Լռել, չհամարձակվել խոսել, վախից ձայնը կտրել:
Լեզուն ծամել - Չհամարձակվել խուսափել որևէ բան պարզ ու որոշ ասել:
Լեզուն ծանր - Խրթին, դժվար հասկանալի:
Լեզուն ծործրակովը հանել - Լռեցնել, պատժել:
Լեզուն ծռել - Անելիքը փոխել:

Լեզուն կախ գցել - Խնդրել, աղաչել:
Լեզուն կապ - Խոսել չկարողացող, չխոսող:
Լեզուն կապ ընկնել - Վախից չկարողանալ խոսել, կարկամել:
Լեզուն կարճ - Խոսելու բարոյական իրավունք կամ համարձակություն չունեցող:
Լեզուն կծել - Մի մութ բան հանկարծակի հասկանալ, գլխի ընկնել:
Լեզուն կտրել՝ տակը դնել - Չխոսել, լռել, չպատասխանել:
Լեզուն հասկանալ - Մեկի մտքերը ըմբռնել, իրար հետ միաբանել, լեզու գտնել:
Լեզուն մաքուր չպահել - Ավելորդ բաներ խոսել, բամբասել, հայհոյել:
Լեզուն մի գազ երկարացնել - Մեծ-մեծ խոսել, պոռոտախոսել:
Լեզուն մինչև Երուսաղեմ կտանի - Հարց ու փորձով կարելի է ցանկացած բանը իմանալ, ցանկացած տեղը գնալ:
Լեզուն յոթ կողպեքի տակ պահել - Լուռ լինել, չխոսել, իմացած գաղտնիքը ամուր պահել:
Լեզուն շաղ տալ - Ավելորդ ափեղցփեղ խոսել:
Լեզուն չռռնել - Տխուր, ցավալի բանը չասել:
Լեզուն չորանալ - Լեզուն կապվել պապանձվել, խոսելու ընդունակությունից զրկվել:
Լեզուն սրել - Չարաքանել, մեկի հասցեին խոսել:
Լեզու որսալ - Գերի բռնել:
Լեզուն վրան երկարել - Իրավունքի կամ այլ առավելության շնորհիվ խոսել:
Լեզուն փորը գցել - Երկյուղից լռել, ձայն չհանել:
Լեզուն քոր գալ - Մի բան ասելու ցանկություն զգալ:
Լեզուն քրքրել - Դեսից-դենից խոսել, շաղակրատել:
Լեզուն ցույց տալ - 1. Հեգնել ծաղրելով: 2. Համակրական արտահայտություն անել:
Լեզու ունենալ - Խոսել կարողանալ:
Լեթարգիական քուն - Երկարատև քուն:
Լեղաճաք անել - Սաստիկ վախեցնել, սրտապատառ անել:
Լեղին պատռվել, ճաքել - Սարսափահար լինել:
Լեղին ջուր կտրել - Սարսափել:

Լեզուն կախ գցել - Խնդրել, աղաչել:
Լեզուն կապ - Խոսել չկարողացող, չխոսող:
Լեզուն կապ ընկնել - Վախից չկարողանալ խոսել, կակազել:
Լեզուն կարճ - Խոսելու բավարար իրավունք կամ համարձակություն չունեցող:
Լեզուն կծել - Մի սուր բան հանկարծակի հասկանալ, գլխի ընկնել:
Լեզուն կտրել՝ տակը դնել - Չխոսել, լռել, չպատասխանել:
Լեզուն հասկանալ - Մեկի մտքերը ըմբռնել, իրար հետ միաբանել, լեզու գտնել:
Լեզուն մաքուր չպահել - Անվայել բաներ խոսել, բամբասել, հայհոյել:
Լեզուն մի գազ երկարացնել - Մեծ-մեծ խոսել, պոռոտախոսել:
Լեզուն մինչև երուսաղեմ կտանի - Հարց ու փորձով կարելի է ցանկացած բանը իմանալ, ցանկացած տեղը գնալ:
Լեզուն յոթ կողպեքի տակ պահել - Լուռ լինել, չխոսել, իմացած գաղտնիքը ամուր պահել:
Լեզուն շաղ տալ - Անվայել ափեղցփեղ խոսել:
Լեզուն չբռնել - Տխուր, ցավալի բանը չասել:
Լեզուն չորանալ - Լեզուն կապվել, պապանձվել, խոսելու ընդունակությունից զրկվել:
Լեզուն սրել - Չարախոսել, մեկի հասցեին խոսել:
Լեզու որսալ - Գերի բռնել:
Լեզուն վրան երկարել - Իրավունքի կամ այլ առավելության շնորհիվ խոսել:
Լեզուն փորը գցել - Երկյուղից լռել, ձայն չհանել:
Լեզուն քոր գալ - Մի բան ասելու ցանկություն զգալ:
Լեզուն բլբլել - Դեսից-դենից խոսել, շաղակրատել:
Լեզուն ցույց տալ - 1. Հեգնել ծաղրելով: 2. Համակրական արտահայտություն անել:
Լեզու ունենալ - Խոսել կարողանալ:
Լեթարգիական քուն - Երկարատև քուն:
Լեղաճաք անել - Սաստիկ վախեցնել, սրտապատառ անել:
Լեղին պատռվել, ճաքել - Սարսափահար լինել:
Լեղին ջուր կտրել - Սարսափել:

Լեյլի-Մեջնուն դառնալ - Սիրահարվել, սիրուց տառապել:
Լեռան պես կանգնել - Հաստատ ու անսասան կանգնել:
Լեռը մուկ ծնեց - Մեծ-մեծ խոստումներ, ակնկալություններ և չնչին, աննշան արդյունք:
Լեռներ շարժել - Անհնարինը կատարել, մարդու ուժերից վեր գործ կատարել:
Լերդն ու թոքը խորովել - Տանջել, չարչարել:
Լիազորությունները վայր դնել - Պաշտոնավարությունը դադարեցնել:
Լինե՞լ, թե՞ չլինել - Կյանքի ու մահվան հարց դրվելը:
Լինչի դատաստան - Առանց դատի և դատավճռի գազանային դատաստան:
Լիրիկական զեղում - Զգացմունքների ազդեցության տակ խոսակցության կամ ճառելու ժամանակ հիմնական նյութից շեղվելը:
Լիքը գլխով - Խելոք, խելացի:
Լիքը գրպանով - Շատ դրամով, հարուստ:
Լծի բերել - Ընտելացնել, ենթարկել, հպատակեցնել, գործի դնել:
Լոբի-փոբի - Ուտող-խմող, չաալ:
Լող տալ (մի բանի մեջ) - 1. Մի բան շատ ունենալ: 2. Հմուտ լինել:
Լպստած մատը ցույց տալ - Ոչինչ չտալ:
Լռիկ-մնջիկ - Սուսուփուս, անձայն:
Լռության մատնել - Որևէ բանի մասին չխոսել, ուշադրություն չդարձնել, անտեսել:
Լսողություն դառնալ - Ուշադրությունը խիստ լարել՝ մի բան լսելու համար:
Լսվա՞ծ բան է - Հնարավո՞ր բան է, մի՞թե կարող է այդպիսի բան պատահել:
Լվացքը դրսում անել - Իրենց տան գաղտնիքը դուրս տանել:
Լվից ձեթ քամել - Սաստիկ ժլատ, ագահ լինել:
Լուծը թոթափել - Մեկի իշխանության տակից դուրս գալ, ինքնուրույն դառնալ:
Լուկուլլոսյան խնջույք - Առատ, ճոխ խնջույք, հարուստ սեղան, շռայլություն:
Լույս աշխարհ բերել - 1.Ծնել, երեխա բերել: 2.Երևան հանել:
Լույս աշխարհ գալ - 1. Ծնվել: 2. Երևան գալ, հայտնվել:
Լույս ընկնել - Անսպասելիորեն երևան գալ, հանկարծակի հայտնվել:
Լույս հանել - Հայտնաբերել, ի հայտ բերել:

Լույսի տակ բռնել - Որևէ տեսանկյունով, որևէ բան հաշվի առնելով:
Լույս տեսնել - Տպագրվել:
Լույսն ու մութը չբաժանված - Արշալույսից բացվելուց առաջ, մթնշաղին, աղջամուղջին:
Լույս սփռել - Որևէ բան բացահայտել, դարձնել հասկանալի, պարզաբանել:
Լույս ու ճար անել - Օգնության հասնել, օգնել:
Լուն ուղտ շինել - Մի չնչին բան մեծացնել, ուռճացնել:
Լուն ունքից բռնելի՝ հազար կտոր կլինի - Չոքերը կիտած լինել, կատաղած է:
Լուսնից ընկած - Երկրի գործերից անտեղյակ մարդ, երկրին անծանոթ:
Լուր առնել - Տեղեկանալ:
Լուր տալ - Հայտնել, իմաց տալ:
Լու բերբող - Ժլատ:

Խ

Խաբար լինել - Տեղյակ լինել:
Խազ քաշել - Մեկից կամ մի բանից հրաժարվել:
Խաթեր համար - Ի պատիվ, մեկի պատվին, ընդառաջ գնալով մեկին:
Խաթրը կոտրել - Մեկին դժգոհություն պատճառել, ցանկությունը չկատարել:
Խաթրին դիպչել - Մեկին նեղություն տալ, նեղացնել:
Խաթր ունենալ - Պատիվ, հարգանք ունենալ:
Խալիչյան տակից քաշել - Իշխանությունից, պատվից զրկել:
Խաղաթղթերը բանալ - Իր մտադրությունը բացահայտել, այլևս չթաքցնել:
Խաղաթղթերը խառնել - Հաշիվները, ծրագրերը խառնել, խափանել:
Խաղաթղթի վրա դնել - Բախտախաղի դնել, անորոշ հարցական դարձնել:
Խաղաղության աղավնի - Խաղաղության խորհրդանիշ:
Խաղաղության հրեշտակ - 1. Մարդկանց պաշտպանող հրեշտակ, խաղաղություն բերող, պահպանող հրեշտակ: 2. Հանգիստ քուն:
Խաղից դուրս գալ - Դադարել գործին մասնակցելուց:
Խաղ խաղալ - 1. Խաբել, խաբելու փորձ կատարել, խարդախել: 2. Փորձանքի մեջ գցել մեկին:
Խաղ կապել - Երգ հորինել:
Խաղով ընկնել - Խաղով տարվել:
Խաղով հասկացնել - Իր ասելիքը ակնարկներով մեկին հասկացնել:
Խաղ ու պար - Ուրախ, զվարթ, ցանկալի:
Խաղք ու խայտառակ - Ծաղր ու ծանակ, անարգանք, անպատվություն:
Խամով ընկնել - Երկար չաշխատելուց հետո մկանները ցավել:
Խայտառակության (անարգանքի) սյունին գամել - Խայտառակության, պարսավանքի ենթարկել, խայտառակել:
Խանգի հողի վրա - Խանդելու պատճառով:
Խանձարուրից դուրս չեկած - Մանուկ, շատ փոքր հասակից, մանկուց:
Խանչալն բաթին առնել (խոփն բաթին առնել) - Գործը ծախսվել, անհաջողության մատնվել:
Խանչալի բաթը ընկնել - Պատվից, բարձրությունից վայր ընկնել, անպատվություն կրել:
Խանչալի բաթը վեր չի ընկնի - Ասվում է այն զոռավոր մարդու մասին, որը ստորացուցիչ է համարում մի գործ անել համարելով այն իր պատվի, անձի համար անհամապատասխան:
Խաչակնքած աշխարհը - Բոլոր հարձակում:
Խաչ դնել (կամ քաշել) - Մի բանից հրաժարվել, մի բանից բոլոր հույսերը կտրել:
Խաչը ճանաչել - Դավանափոխ լինել:
Խաչը պղծել - Քրիստոնեական դավանանքին հակառակ բան անել կամ գործել:
Խաչը վկա - Աստված վկա:
Խաչ հանել - 1. Խաչակնքել: 2. Սահապատժի ենթարկել:
Խաչն իմ է, զորությունը ես գիտեմ - Իմ սեփականն է, ծանոթն է, ես նրա կարողություններն բոլորից լավ գիտեմ:
Խավարի թագավորություն - Որտեղ իշխում է հետամնացությունը, տգիտությունը:
Խարխախ գցել - Բնակություն հաստատել:
Խարջի տակ դնել - Հարկադրել, հարկի տակ դնել:
Խարջի տակ ընկնել - Չնախատեսված ծախսեր անել:
Խեթ աչքով նայել - Խոժոռ նայել, անբարյացակամ վերաբերվել:

Լույսի տակ բռնել - Որևէ տեսանկյունով, որևէ բան հաշվի առնելով:
Լույս տեսնել - Տպագրվել:
Լույսն ու մութը չբաժանված - Արշալույսը բացվելուց առաջ, մեծ շաղին, աղջամուղջին:
Լույս սփռել - Որևէ բան բացահայտել, դարձնել հասկանալի, պարզաբանել:
Լույս ու ճար անել - Օգնության հասնել, օգնել:
Լուն ուղտ շինել - Մի չնչին բան մեծացնել, ուռճացնել:
Լուն ունքից ընկնի՝ հազար կտոր կլինի - Հոնքերը կիտած լինել, կատաղած է:
Լուսնից ընկած - Երկրի գործերից անտեղյակ մարդ, երկրին անծանոթ:
Լուր առնել - Տեղեկանալ:
Լուր տալ - Հայտնել, իմաց տալ:
Լու քերթող - Ժլատ:

Խ

Խաբար լինել - Տեղյակ լինել:
Խազ քաշել - Մեկից կամ մի բանից հրաժարվել:
Խաթեր համար - Ի պատիվ, մեկի պատվին, ընդառաջ գնալով մեկին:
Խաթրը կոտրել - Մեկին դժգոհություն պատճառել, ցանկությունը չկատարել:
Խաթրին դիպչել - Մեկին նեղություն տալ, նեղացնել:
Խաթր ունենալ - Պատիվ, հարգանք ունենալ:
Խալիչյան տակից քաշել - Իշխանությունից, պաշտոնից զրկել:
Խաղաթղթերը բանալ - Իր մտադրությունը բացահայտել, այլևս չթաքցնել:
Խաղաթղթերը խառնել - Հաշիվները, ծրագրերը խառնել, խափանել:
Խաղաթղթի վրա դնել - Բախտախաղի դնել, անորոշ հարցական դարձնել:
Խաղաղության աղավնի - Խաղաղության խորհրդանիշ:
Խաղաղության հրեշտակ - 1. Մարդկանց պաշտպանող հրեշտակ, խաղաղություն բերող, պահպանող հրեշտակ: 2. Հանգիստ քուն:
Խաղից դուրս գալ - Կանգնել գործին մասնակցելուց:
Խաղ խաղալ - 1. Խաբել, խաբելու փորձ կատարել, խարդախել: 2. Փորձանքի մեջ գցել մեկին:
Խաղ կապել - Երգ հորինել:
Խաղով ընկնել - Խաղով տարվել:
Խաղով հասկացնել - Իր ասելիքը այլաբանորեն ակնարկներով մեկին հասկացնել:
Խաղ ու պար - Հեշտ, դյուրին, ցանկալի:
Խաղք ու խայտառակ - Ծաղր ու ծանակ, անարգանք, անպատվություն:
Խամով ընկնել - Երկար չաշխատելուց հետո մկանները ցավել:
Խայտառակության (անարգանքի) սյունին գամել - Խայտառակության, պարսավանքի ենթարկել, խայտառակել:
Խանդի հողի վրա - Խանդելու պատճառով:
Խանձարուրից դուրս չեկած - Մանուկ, շատ փոքր հասակից, մանկուց:
Խանչալի բարին առնել (խոփը բարին առնել) - Գործը ձախողվել, անհաջողության մատնվել:
Խանչալի բարձ ընկնել - Պատվից, բարձրությունից վայր ընկնել, անպատվություն կրել:
Խանչալի բարը վեր չի ընկնի - Ասվում է այն զորավոր մարդու մասին, որը ստորացուցիչ է համարում մի գործ անել հանձնելով այն իր պատվի, անձի համար անհանդուրժելի:
Խաչակիրաց արշավանք - Բուռն հարձակում:
Խաչ դնել (կամ քաշել) - Մի բանից հրաժարվել, մի բանից բոլոր հույսերը կտրել:
Խաչը չմանաչել - Աստվածավախ չլինել:
Խաչը պոկել - Քրիստոնեական դավանանքին հակառակ բան անել կամ գործել:
Խաչը վկա - Աստված վկա:
Խաչ հանել - 1. Խաչակնքել: 2. Մահապատժի ենթարկել:
Խաչն իմ է, զորությունը ես գիտեմ - Իմ մերձավորն է, ծանոթն է, ես նրա կարողությունները բոլորից լավ գիտեմ:
Խավարի թագավորություն - Որտեղ իշխում է հետամնացությունը, տգիտությունը:
Խարիսխ գցել - Բնակություն հաստատել:
Խարազի տակ դնել - Չարչարել, [illegible] տակ դնել:
Խարույի տակ ընկնել - [illegible]
Խեթ աչքով նայել - Խոժոռ նայել, անբարյացակամ վերաբերվել:

խելամիտ լինել - Զսականալ, ըմբռնել:
խելառ երակը բռնել - Մեկի կատաղությունը, տարօրինակություններին բռնել, այծերը գալ:
խելթափան անել - Խելքից հանել, հիմարացնել:
խելքիդ աղ անեմ - Անխելք ես, խելքդ չի կտրում:
խելքդ ժողովիր (հավաքիր) - Խելքի եկ, սթափվիր, արածդ կշռադատիր:
խելքդ ուռե՞՞ղ է - Ինչո՞ւ ուշադիր չես:
խելքն առնել - 1. Խելքից զրկել, անխելքացնել: 2. Հմոզելով խաբել:
խելքն բան կտրել - Հասկանալ:
խելքն գլխին - Խելացի, ուշիմ, գիտակից:
խելքն գլխին պահել - Զգոն, ուշադիր լինել:
խելքն գլխից թռչել - Խելքից զրկվել, խենթանալ, ցնորվել:
խելքն գլուխն գալ - Խելոքանալ, խոստովել:
խելքն գլուխն բերել - 1. Սթափեցնել: 2. Խելոքանալ, խելքի գալ:
խելքն գնալ - Բուռն կերպով սիրել, շատ հավանել, հափշտակվել, հմայվել:
խելքն գնալ-գալ - Տատանվել, վարանել:
խելքն գործի դնել - Խելքն ունակությունները դրսևորել:
խելքն թափ տալ - Մեկին խոսեցնել, փորձել մեկի մտավոր կարողությունը:
խելքն թռցրած - Ցնորված:
խելքն խակ - Անփորձ, միամիտ:
խելքն կարճ - Խելքն պակաս, քիչ հասկացող:
խելքն կտրել - Գիտակցել, մտածել:
խելքն հասնել - Մի բանից հասկանալ:
խելքն մտնել - 1.Մեկի վստահությունը գրավելով խաբել: 2.Ըմբռնել, հասկանալ:
խելքն տանել - Խենթացնել:
խելքն հացի հետ ուտել - Բան չհասկանալ, խելքն կորցնել:
խելքն ուտել - Հանգել, գժվել:
խելքի բերել - 1. Ուշագնացին սթափեցնել, ուշքի բերել: 2. Ուղիղ ճանապարհի բերել:
խելքի գալ - Սթափվել, ուշքի գալ, խելոքանալ:
խելքի ծով - Խելոք, խելացի, շատ ծարգացած:
խելքի ծեքքն կրակն ընկնել - Տատանվել, ցնդվել, շվարել, իր անելիքն չիմանալ:

խելքի մոտ - Հավանական, ինարավոր:
խելքից դուրս - 1 Անչափ շատ: 2.Անմիտ:
խելքից խեղճ - Աղքատամիտ, տխմար, տկարամիտ:
խելքից հանել - Խաբել, մոլորեցնել:
խելքից հեռու - Անհավանական, անհնար:
խելքից պատուհաս - Փորձանք պատուհաս, որի առաջանալու պատճառը իր սեփական խելքն է:
խելք խելքի տալ - Միասին մտածել, իրար հետ խորհրդակցելով մի բան անել:
խելքով ընկնել - Մեկին լսել, մեկի խոսքով շարժվել:
խելք սովորեցնել - Խրատել, խորհուրդներ տալ:
խեղդվողը ծեռքն փրփուրին է գցում - Անհուսալի դրության մեջ գտնվողը իրեն փրկելու համար ամենաչնչին միջոցին էլ է դիմում:
խեղճ ու կրակ - Խեղճ, թշվառ:
խերին ու շառին խառնվել (կամ չխառնվել) - Ուրիշի գործերին միջամտել (կամ չմիջամտել):
խիղճը ծախել - Որևէ օգուտի, շահի համար խղճին, սկզբունքին հակառակ բան անել, խիղճը մոռանալ:
խիղճը կեղտոտ - Հանցանք կատարած, մեղավոր, մեղքի տակ ընկած:
խիղճը հանգիստ - Ապահով, անհոգ, առանց տագնապի:
խիղճը հանգստացնել - Պարտականությունը կատարել իր խղճի առաջ հանգիստ լինելու համար:
խիղճը մեռած - Անխիղճ, անգութ:
խիղճը տանջել - Մեկի կամ մի բանի նկատմամբ անիրավացի լինելու համար խղճի խայթ զգալ:
խղճի խայթ (զգալ) - Մի բանի կապակցությամբ խիղճը տանջել, իրեն մեղավոր զգալով զղջալ:
խղճի վրա վերցնել - Որևէ բանի պատասխանատվությունը իր վրա վերցնել, պատասխանատու իրեն համարել:
խմած աղբյուրի ջրի մեջ թքել - Երախտամոռի հանդես ապերախտ գտնվել:
խնամու եղան գյուղից է - Շատ հեռավոր ազգականների կամ իրենց ազգական համարողների մասին է ասվում:
խնդիրը փակվել - Հարցը համարել փակված:
խնդրից հեռանալ - Տվյալ հարցին

չվերաբերող բանի մասին խոսել:
խնկով (մոմով) փնտրել - Մեկին շատ կարոտել, մեծ ցանկություն ունենալ մեկին տեսնելու:
խնձոր գլորել - Տարաձայնություն առաջացնելու նպատակով բանսարկությամբ մի հարց արծարծել, մի առաջարկություն անել:
խող կտրել - Սաստիկ չաղանալ, գիրանալ:
խոշորացույցով նայել - Դեպքերը իրականից ավելի մեծ ներկայացնել, չափազանցնել, լուն ուղտ շինել:
խոսակցության թելը կտրել - Խոսակցությունը ընդհատել, դադարեցնել:
խոսակցությունը չկպչել - Խոսակցի հետ չկարողանալ ընդհանուր լեզու գտնել, խոսակցի հետ զրույցը չստացվել:
խոսելու համար մեռած - Զրուցասեր, շատախոս:
խոսելու վրա լինել - Իրար հետ լեզու գտնել կամ մի բան խոստանալ (օրինական կամ անօրինական բան կատարելու):
խոստումներով կերակրել - Սուտ խոստումներ տալ շարունակ, բայց չկատարել:
խոսք անգամ չի կարող լինել - Այդ մասին ավելորդ է խոսել, այդ բանը հնարավոր չէ:
խոսք առնել - 1. Մեկի համաձայնությունը ստանալ: 2. Խոսելու համար թույլտվություն ստանալ: 3. Ամուսնանալու համաձայնություն ստանալ:
խոսք բացվել (գնալ) - Մեկի կամ մի նյութի մասին խոսվել:
խոսքդ ճանաչիր - Հանդիմանական արտահայտություն զգույշ եղիր, պատկառանք զգա:
խոսքը դուրս գալ - Գաղտնիքը բացահայտվել:
խոսք դուրս քաշել - Զանազան միջոցներով մեկից որևէ բան իմանալ:
խոսքը հալած յուղի տեղ դնել - Մեկի ասածը, կարծիքը անվերապահորեն ճշմարտության տեղ ընդունել:
խոսքը մեկ անել - Իրար հետ համաձայնության գալ, համաձայնել, միաբանել:
խոսքը մի փութ մեղրով չի ուտվի - Շատ ծանր, դառը արտահայտություն է:
խոսքը բամբուն (չ)տալ - Իզուր (չ)խոսել:
խոսքից դուրս գալ - Մեկին չլսել, մեկի խոսքը չկատարել:
խոսքն անցնել - Մեկի ասածը նշանակություն, ազդեցություն ունենալ:
խոսքը բերանում մնալ - Խոսքը կիսատ մնալ, մի անակնկալ դեպքի պատճառով ընդհատվել:
խոսքը գետինը գցել (չգցել) - Մեկի խոսքը մերժել (կամ չմերժել), անտեսել (կամ չանտեսել), արհամարհել (կամ հարգել):
խոսքը երկու չանել - Ասածն անմիջապես կատարել, կրկնել չտալ:
խոսքը լեզվի ծայրին լինել - Պատրաստ լինել ասելու:
խոսքը խոսք բերել - Փոխադարձաբար իրար ասված խոսքերը վեճի առիթ դառնալ, վիճել:
խոսքը խոսք է - Նա ասածից չի հրաժարվի, խոսքն այլևս փոփոխման ենթակա չէ:
խոսքը ծամել՝ մեկի բերանը դնել - Մանրամասն ամեն ինչ բացատրել, սովորեցնել, թե ինչ պետք է խոսի:
խոսքը ծամծմել - Ասելիքը ուղիղ, պարզ չասել:
խոսքը կոտրել - Մեկի խոսքը չհարգել, ասածը չկատարել:
խոսքը կտրել - Խոսողին ընդհատել, այլևս չխոսել:
խոսքը կտուրը գցել - Խոսակցության առարկան մեկից նոր եկողից թաքցնելու նպատակով վարպետորեն նյութը փոխել, ուրիշ բանի մասին սկսել խոսել:
խոսքը կուլ տալ - Ասելիքը մինչև վերջ չասել, թաքցնել:
խոսքը մեկ անել - Միաբանվել, նույն բանը ասել:
խոսքը մեր մեջ - Ասածս գաղտնիքը մնա մեր մեջ, ուրիշի չասես:
խոսքը շուռ գալ - Խոսակցությունը փոխել:
խոսքը ջուրը գցել - Իր խոսքից հրաժարվել:
խոսքը սար ու ձոր գցել - Մտածածը ասելիքը, անմիջապես չասել:
խոսքը տեղ հասնել - Ասածը նպատակին հասնել:
խոսքի բռնվել - Մեկի հետ խոսել, վիճել, մեկի հետ անսպասելի խոսակցության բռնվել:
խոսքի թելը կտրել - Խոսքի

տրամաբանական կապը կտրել, խոսքը ընդհատել:
խոսքի մեջ աղ չկա - Խոսքն անհամ է, բովանդակալից չէ:
խոսքի մեջ ընկնել - Խոսակցությանը խառնվել:
խոսքին կշիռ տալ - Խոսքին կարևորություն տալ:
խոսքի տակ չմնալ - Մեկի ասած խոսքերին դիպուկ, տեղին պատասխաններ տալ:
խոսքի օրինակ - Որպես օրինակ, օրինակի համար:
խոսք լինել չի կարող - Մի բանի մասին անժամանակ կամ անհնար է խոսել:
խոսք լսող - Հնազանդ, խոնարհ:
խոսքը մեկ արած - Միաբանված, իրար հետ համաձայնեցված, պայմանավորված:
խոսք մեջ գցել - 1. Միջամտել: 2. Խոսակցության նյութ դարձնել:
խոսքով շարժվել - Մեկի կամակատարը լինել, նրա խորհուրդները լսել, կատարել:
խոսք ու զրույց - Բամբասանք, վեճ, աղմուկ:
խոտ արածող - Անհասկացող, տգետ, խեղճ:
խոտորնակին խոտորնակ - Հակառակին հակառակ, վատության վատությամբ պատասխանել, հատուցել:
խորթ աչքով նայել - Մեկին անբարյացակամ վերաբերմունք ցույց տալ:
խորոված հոտ առնել - Մի օգտավետ շահավետ բանի ձայն լսել:
խոփը սուր - Զորեղ, զորավոր:
խոփը քարին առնել - Անակնկալ արգելքի հանդիպել, գործն առաջ չգնալ:
խրատ կարդալ - Յորդորել, խրատել:
խունջիկ-մունջիկ գալ - Սեթևեթել, կոտրատվել, նազկտալ:
խուլի ականջին քարոզ կարդալ - Իզուր, ապարդյուն խոսել, քարոզել:

Ծ

ծալել գրպանը դնել - Մեծ ուժ կամ արժանիք ունենալ, մեկին կարողանալ հաղթել:
ծալ(ք)ը պակաս - Պակասամիտ, տխմար, թեթևոլիկ, սակավամիտ:
ծախսի տակ գցել - Մեկին ծախսել տալ:

տրամաբանական կապը կտրել, խոսքը ընդհատել:
խոսքի մեջ աղ չկա - Խոսքն անհամ է, բովանդակալից չէ:
խոսքի մեջ ընկնել - Խոսակցությանը խառնվել:
խոսքին կշիռ տալ - Խոսքին կարևորություն տալ:
խոսքի տակ չմնալ - Մեկի ասած խոսքերին դիպուկ, տեղին պատասխաններ տալ:
խոսքի օրինակ - Որպես օրինակ, օրինակի համար:
խոսք լինել չի կարող - Մի բանի մասին անժամանակ կամ անհնար է խոսել:
խոսք լսող - Հնազանդ, խոնարհ:
խոսքը մեկ արած - Միաբանված, իրար հետ համաձայնեցված, պայմանավորված:
խոսք մեջ գցել - 1. Միջամտել: 2. Խոսակցության նյութ դարձնել:
խոսքով շարժվել - Մեկի կամակատարը լինել, նրա խորհուրդները լսել, կատարել:
խոսք ու զրույց - Բամբասանք, վեճ, աղմուկ:
խոտ արածող - Անհասկացող, տգետ, խեղճ:
խոտորնակին խոտորնակ - Հակառակին հակառակ, վատությանը վատությամբ պատասխանել՝ հատուցել:
խորք աչքով նայել - Մեկին անբարյացակամ վերաբերմունք ցույց տալ:
խորոված հոտ առնել - Մի օգտավետ՝ շահավետ բանի ձայն լսել:
խոփը սուր - Զորեղ, զորավոր:
խոփը քարին առնել - Անակնկալ արգելքի հանդիպել, գործն առաջ չգնալ:
խրատ կարդալ - Յորդորել, խրատել:
խունջիկ-մունջիկ գալ - Սեթևեթել, կոտրատվել, նազկտալ:
խուլի ականջին քարոզ կարդալ - Իզուր, ապարդյուն խոսել, քարոզել:

Ծ

ծալել գրպանը դնել - Մեծ ուժ կամ արժանիք ունենալ, մեկին կարողանալ հաղթել:
ծալ(ք)ը պակաս - Պակասամիտ, տխմար, քեթևոլիկ, սակավամիտ:
ծախսի տակ գցել - Մեկին ծախսել տալ:

ծակ գրպան - Ղատարկագրպան, դրամ չունեցող:
ծակը դնել - Բանտարկել:
ծակ ու ծուկ - Բոլոր թաքնվելու տեղերը, բոլոր անկյունները:
ծակ ու ծուկերը լցնել - Թերությունները, բացերը վերացնել, կոծկել:
ծակուռը մտնել - Թաքնվել:
ծակ փիլիսոփայություն - Ոչ թե փաստերի, այլ երևակայության վրա հիմնված դատողություն, վերացական դատողություններ:
ծաղր ու ծանակ - Ծիծաղի և խայտառակության առարկա:
ծամը կտրած - Անբարոյական կին:
ծայր առնել - Սկսվել, սկիզբ առնել:
ծայր աստիճան - Խիստ շատ, հույժ, չափազանց:
ծայրը ծայրին բերել - Հազիվհազ, մի կերպ ապրուստը հոգալ:
ծայրը ծայրին հասցնել - Ապրուստը մի կերպ հոգալ:
ծայրը չի երևում - Ի՞նչ է լինելու հետևանքը, ի՞նչ է լինելու վերջը:
ծանր ականջ - Խուլ, ծանր լսող:
ծանր բեռ - Նյութական ծանրություն, մեծ ծախս:
ծանր գալ - Մեկին մի բան անհաճո լինել:
ծանր գլուխ - Անընդունակ, ուշ ըմբռնող մարդ:
ծանր լեզու - 1. Դժվարախոս, դանդաղախոս մարդ: 2. Դժվարըմբռնելի (լեզու):
ծանր խոսք - Նախատինք:
ծանր հրետանի - Կենտրոնական դեմքը, գլխավոր ուժը, կարևորագույն փաստարկ:
ծանր մարդ - Լուրջ, խոհեմ:
ծանր նստել - 1. Երկար նստել: 2. Պատժվել, վնասվել: 3. Ծախսի տակ ընկնել:
ծանր ոտ - Հղի կին:
ծանր տեղը քեքևանալ - Չնախատեսված մերժում ստանալով՝ ինքնասիրությունը վիրավորված զգալ:
ծանր ու բարակ - Մանրամասն, երկար ծգձգելով:
ծանր ու թեթև անել - Լավ կշռադատել, նախքան քայլի դիմելը վերլուծել:
ծանրության կենտրոն - Որևէ գործի կամ խնդրի էական մասը՝ հիմքը:
ծանր ու մեծ - Լուրջ, հանդիսավոր կերպով, լուրջ դիրք ընդունելով:

Ծառերի հետևում անտառը չտեսնել - Մանրուքի վրա ուշադրություն դարձնելով մոռանալ հիմնականը:
Ծառս լինել - Ծառանալ, հետևի ոտքերի վրա կանգնել:
Ծարավը կոտրել - Մի քիչ ջուր խմել:
Ծարավ ջուրը տանել-բերել - Աչքաբաց լինել:
Ծափ ու ծիծաղ անել - Շատ ուրախանալ:
Ծեգը ծեգին - Առավոտյան շատ վաղ, ծեգը բացվելուն պես:
Ծեծ տալ - Ծեծել:
Ծեծ ուտել - Ծեծվել:
Ծեր աղվես - Փորձված ու խորամանկ հասակավոր մարդ:
Ծիծեռնակի կաթ - Խիստ հազվագյուտ, չճարվող բան:
Ծիտն անգամ չի կարող անցնել - 1. Դժվարամատչելի տեղ է: 2. Մեծ զգուշությամբ է պահպանվում:
Ծնկի բերել - Իրեն ենթարկել, խոնարհել, ընկճել:
Ծնկի գալ - Ենթարկվել, պարտվել, խոնարհվել:
Ծնկի տակին կուչ գալ - Ընբշամարտում հաղթվել:
Ծնկները թուլանալ - Մի բանից վախենալ:
Ծնկները ծալվել - Ֆիզիկական թուլությունից ոտների վրա չկարողանալ մնալ:
Ծնոտը թուլացնել - Լեզվի կապերը արձակել, շատախոսել:
Ծնունդ տալ - Իրականացնել, սկիզբ տալ, իրագործել:
Ծոծրակը տեսնել - Երբեք չտեսնել:
Ծոծրակը քորել - Տարակուսանքի մեջ ընկնել:
Ծոծրակը քորելով մնալ - Անել, խեղճ վիճակում մնալ, շվարել, մոլորվել:
Ծոծրակը քորելու ժամանակ չունենալ - Խիստ զբաղված լինել, ոչ մի վայրկյան ժամանակ չունենալ:
Ծովային գայլ - Ծովային գործերին լավատեղյակ, հմուտ, մեծ փորձ ունեցող:
Ծով աչքեր - Մեծ, խոշոր աչքեր:
Ծով է - Շատ առատ է:
Ծով է, ծով - Շատ իմաստուն, գիտուն է:
Ծովը գնալ՝ ծարավ ետ գալ - Անճարության պատճառով ծախորդության հանդիպել, խեղճ, անշնորհք լինել:
Ծով հրդեհել - Անիրագործելի բանի ձեռնամուխ լինել, հիմար-հիմար, անիրագործելի բաների մասին խոսել:

Ծոցը քար դնել - Սրտապնդվել, համարձակություն ստանալ:
Ծոցում տաքացնել - Պահել, հոգ տանել:
Ծոցում օձ տաքացնել - Մեկին պահել, հովանավորել չիմանալով, որ նա իր թշնամին է:
Ծուռ- մուռի (ծռտի-պռտի) - Մանր-մունր, անարժեք:
Ծտի խելք - Սակավ, չնչին խելք:
Ծտի կաթ - Հազվագյուտ, չճարվող բան:
Ծտի նման - Շատ արագ, շատ թեթև:
Ծտի սիրտ - Սաստիկ վախկոտ:
Ծուխը կտրել - Մի ընտանիքի կոտորել, բնաջնջել:
Ծուխը քթից դուրս գալ - Հոգեպես տանջվել, ցավել, շատ վատ զգալ:
Ծուխը քթից հանել - Չարչարել, տանջել:
Ծուղակը գցել - Խորամանկությամբ բռնել:
Ծուղակն ընկնել - Խորամանկության զոհ դառնալ, թակարդն ընկնել:
Ծունկ չոքել - Խոնարհվել մեկի առաջ, ծնկի գալ, աղաչել:
Ծունկ ծնկի տալ - Իրար մոտ նստել:
Ծունկի իջնել (չոքել) - 1. Աղաչել, մեկից նվաստանալով որևէ բան խնդրել: 2. Չոքել:
Ծուռ աչքով նայել - 1.Խեթ, թշնամաբար նայել: 2.Վավաշոտ հայացք գցել:
Ծուռ խոսք - Խայթող խոսք:
Ծուռ հայելի - Իրականությունը ոչ ճիշտ, աղավաղված պատկերացնող միջոց:
Ծուռ ճանապարհ բռնել - Վարքով ու գործունեությամբ կարգից շեղվել:
Ծուռ նստել, շիտակ խոսել - Ճիշտ, անկեղծ խոսել:
Ծուռ քիթ - Խորամանկ, տակետակ:

Կ

Կաբինետային գիտնական - Կյանքից կտրված, գրքերի սահմաններից դուրս չեկող գիտնական:
Կաթիլ ջուր դառնալ - Մեկի աչքին այլևս չերևալ, անսպասելի անհայտանալ:
Կաթսայի մեջ առնել - Շրջափակել:
Կալի վրա հասնել - Բարեպատեհ ժամանակ գալ, վրա հասնել հարմար ժամանակ:
Կալմեջ անել - Շրջապատել, հարկադրել, հետապնդել:
Կալուկապ անել - Բռնել, կապել, կաշկանդել, խոսելու հնարավորությունից զրկել:

Կալուկապ գցել - Շփոթեցնել, կախարդել:
Կալուկապ ընկնել - Լեզուն բռնվել, համրանալ:
Կախարդական բանալի - Անհնարին բաներ բացող երևակայական բանալի:
Կախարդական (մոգական) գավազանի շարժումով - Շատ արագ, ակնթարթորեն:
Կախարդական շրջան - Անելանելի վիճակ:
Կախման կետեր դնել - Որևէ հարցի լուծումը ասկախ թողնել:
Կակուղ երակը (դամարը) բռնել - Մեկի թույլ կողմը իմանալ, օգտագործել:
Կաղապարի մեջ դնել - Մեկի միտքը, իրավունքները, ազատությունը սահմանափակել:
Կաղ էշով ճանապարհ ընկնել - Առանց կայուն հիմքերի որևէ գործ սկսել, նախաձեռնել, իր հնարավորությունները հաշվի չառնելով գործ սկսել:
Կաղ էշով քարավան մտնել - Գործին անհամապատասխան լինել, իր ուժերից բարձր գործի մեջ մտնել:
Կամա-ակամա - Իր կամքին հակառակ, ինքնաբերաբար:
Կամ աղը պակաս լինել, կամ մաղը - Մի որևէ կարիք հոգալ, մի բանի կարիք ունենալ.
Կամելիազարդ տիկին - Թեթևաբարո կին:
Կամուրջ գցել - Մի բանի հետ կապ ստեղծել:
Կամուրջները այրել - Անցյալին այլևս չվերադառնալ, մի բան վճռականորեն որոշել, վճռական քայլ կատարել:
